

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



C-300 զենիթաօդերժային համակարգը

Անցնող տարու ընթացքին Հայաստանի հակաօդային պաշտպանության համակարգը կատարելագործված է և արդիականացված է Ռուսաստանի ավիացիոն թռչող սարքերով: Յուժնուար 17-ին, «Կրասնայա զվեզդա» թերթին այս մասին յայտնված է Ռուսաստանի ռազմաօդային ուժերու գլխավոր հրամանատարի տեղակալ Ալեքսեյ Բիթեղը:

«Իրականացված է տեխնիկայի, կառավարման և կապի համակարգի վերանորոգում, ինչպես նաև հայաստանցի զինուորականներու վերապատրաստում՝ C-300 զենիթահրթիռային համակարգերի հետ աշխատելու նպատակով», - ըսած է Ռուս զորավարը:

Թերթը այս առթիվ կը յիշեցնէ, որ Հայաստանում մէջ կը գտնուի Ռուսաստանեան 102-րդ ռազմական ջանք:

ՈՐՔԱՆՈՎ ՊԱՏՐԱՍ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, ՅԱՅՏՆԻ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԵՏՔ ՄԻԱՅՆ

Եւրոպայում Ապահովութեան և Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Ժողովրդավարական Հաստատութիւններու և Մարդու իրաւունքներու գրասենեակի (ԺՀՄԻԳ) տնօրէն Քրիստիան Շտրոնալ Յունուար 16-ին աւարտելով իր երկօրեայ այցը Հայաստան յայտարարեց, որ Հայաստան պատրաստ է արդար ընտրութիւններու, բայց յայտնի կը դառնայ միայն ընտրութիւններէն յետոյ:

Հանդիպումներ ունենալով Ռոբերտ Բոչարեանի, Ազգային ժողովի նախագահի, արտաքին գործոց նախարարի, Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահի, խորհրդարանական քաղաքական ուժերու ներկայացուցիչներուն հետ, Քրիստիան Շտրոնալ քննարկած է օրէնսդրական և ընտրական գործընթացներուն և գալիք խորհրդարանական ընտրութիւններուն առնչուող հարցերը:

Հայաստանի իշխանութիւնները տակաւին հրաւեր չեն յղած ԵԱՀԿ-ին՝ դիտորդական առաքելութիւն ուղարկելու խնդրանքով: Պաշ-

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԵՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԵՒ «ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ՀՍԿԻՉԸ» ԿԸ ՄԵՂԱԴԻԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցեալ շաբթուայ ընթացքին, մէկ օրուայ մէջ Հայաստան ստացաւ երկու ուժգին հարուած երբ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը և «Մարդկային իրաւանց Հսկիչը» առանձին յայտարարութիւններով եկան մեղադրելու երկրի իշխանութիւնները՝ միջազգային չափանիշերը խախտելու մէջ:

Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը Յունուար 11-ին հրապարակեց Հայաստանէն ներկայացուած հայցով իր առաջին վճիռը, ըստ որու Հայաստանի մէջ խախտուած է հայցուորի՝ Արմէն Մկրտչեանի, խաղաղ հաւաքներ կազմակերպելու ազատութեան իրաւունքը:

Հայցը Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարան ներկայացած էր 2002 թուականի Մայիսին Երեւանի մէջ բողոքի ցուցիչներ վարչական տոյժի ենթարկուած ընդդիմադիր «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղաքացիներու դիմումով: «Ազգային վերածնունդ» կուսակցութեան անդամ Արմէն Մկրտչեան:

Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանը միաձայն որոշած է, որ խախտուած է Մարդու իրաւունքներու եւրոպական Ուխտի 11-րդ յօդուածը, որու համաձայն իւրաքանչիւր անձ ունի խաղաղ հաւաքներու ազատութեան իրաւունք:

2002 թուականի Մայիս 14-ին «Հանրապետութիւն» կուսակցու-

թիւնը և շաբթի մը այլ քաղաքական ուժեր Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ արտօնուած ցույց կազմակերպած էին: Նոյն օրը երեկոյեան «Հանրապետութիւն» կուսակցութեան երիտասարդական թեւի մի քանի անդամներ ձերբակալուած էին, և զանոնք ազատ արձակելու նպատակով Արմէն Մկրտչեան, որպէս կազմակերպիչ, գացած էր Արաբկիրի ոստիկանական բաժանմունք և նոյնպէս ձերբակալուած էր: Այնուհետև շարունակուած էր թի մասնակցելու մեղադրանքով առաջին ատենի դատարանը Մկրտչեանին վարչական տոյժի ենթարկած էր՝ տուգանելով 500 դրամի չափով: Վերաքննիչ դատարանը առաջին ատենի որոշումը անփոփոխ թողած էր, իսկ վճռաբեկը ընդհանրապէս մերժած էր գործը քննել:

Արմէն Մկրտչեանի փաստաբան Նիկոլայ Բարդասարեան «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ արդեօք դատարանի վճիռը կ'ենթադրէ նաև նիւթական կամ բարոյական վնասի փոխհատուցում, պատասխանեց. - «Մենք չենք ներկայացրել որեւէ նիւթական փոխհատուցման պահանջ՝ միայն բարոյական վնասի փոխհատուցման պահանջ: Եւրոպական դատարանը գտել է, որ ինքնին այդ դատավճիռը բարոյական վնասի համարժէք հատուցում է»:

Նոյն օրը, Մարդկային իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) կազմակերպութիւնը հրապարակեց տեղեկագիր մը, ուր կը յայտնուի թէ



2006 թուականի ընթացքին Հայաստանի կառավարութիւնը քիչ ջանք գործադրած է՝ մարդու իրաւունքներու երկար խախտումները կանխելու ուղղութեամբ:

Չեկոյցի հեղինակները կը հաստատեն, որ «մամուլի ազատութեան սպառնալիքները շարունակուած են, աւելցած է բռնութիւններու ու ճնշումներու ենթարկուած լրագրողներու թիւը, ելքաորոնային լրատուամիջոցները դեռ իշխանութիւններու հսկողութեան տակ են և աչքի կը զարնեն բազմակարծութեան պակասով»:

«Հեռուստատեսութեան և ռատիոյ ազգային յանձնաժողովի, ինչպէս նաև Հանրային հեռուստառատիւններու թեւաւորութեան խորհուրդի բոլոր անդամները կը նշանակուին երկրի նախագահի կողմէ», - կը շեշտեն միջազգային կազմակերպութեան մասնագէտները ու կ'աւելցնեն. - «Իշխանութեան վերահսկողութեան պատճառով Հանրային հեռուստատեսութիւնը բաւարար չափով անկախ չէ՝ իրադարձութիւնները անաչառ և բազմակողմանի լուսաբանելու համար»:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնները կը շարունակեն իրենց ճնշումները:



ԺՀՄԻԳ-ի տնօրէն Քրիստիան Շտրոնալ

տօնական աղբիւրներու համաձայն, հրաւերը կ'ուղղուի երբ պաշտօնապէս կը յայտարարուի խորհրդարանական ընտրութիւններու օրը:

«Ազատութիւն» ռատիոկայանի այն հարցին, թէ բաւարար ժամանակ կայ արդեօք մինչեւ ընտրութիւնները դիտորդական

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Համազգային երեք կուսակցութիւններու՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, և Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի պատասխանատու մարմինները հանդիպում մը ունեցան Երեւանի, 9 Յունուար, 2007-ին, Ալթատիմայի մէջ: Խորհրդակցական բնոյթով այս հանդիպումը արժարժեց ազգային և գաղութի առնչուող այլազան մտահոգութիւններ, ինչպէս նաև անդրադարձաւ Հայկական Ցեղասպանութեան հարցին շուրջ զարգացող իրադարձութեան: Նոյնպէս, գաղութի մէջ Հայկական Ցեղասպանութեան նախնական ի խնդիր միասնական պահանջատիրութեան:

Նոյնաման հանդիպումները յաջողակ էին և անցելի: Այս հանդիպումները միշտ ալ ուղեցոյց ունեցած են և նպաստած գաղութի համազգային շահերուն: Նոյն ոգիով ալ, կը հաւատանք որ այս հանդիպումները կը նպաստեն մեր վերանկախացած հայրենիքի հզօրացման և ամրակայման:

Հ.Յ.Դ. Արեւմտ. Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէ
 Ռ.Ա.Կ. Արեւմտ. Ամերիկայի Սրբաճային Վարչութիւն
 Ս.Դ.Հ.Կ. Արեւմտ. Ամերիկայի Վարչի Մարմին
 Յունուար 18, 2007

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍՈՒ

ՎԵՆՑ ՍԱ Է ԿՈՉԻՈՒՄ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետության թիվ 131 մասնադատներից 67-ը, ՀՀԿ-ն, թե՛ ԲՀԿ: Բնականաբար, ըստ այս տրամաբանության, մնացած մասնադատներն էլ բաժին են հասնելու երկուորեակ միւս գոյգին: Ասել է թե՛ սաղ երգերը երգել են, մնացել է սարի ամբուլը: Իհարկէ, կանխատեսումները ցանկացած քաղաքական պրոցեսի անբաժանելի մասն են, եւ այստեղ զարմանալի ոչինչ չկայ: Բայց հայաստանեան ժամանակակից գուշակները դրանք անուամբ են դէմքի մի այնպիսի արտայայտութեամբ (ասես գուբախիտական ատամների արանքում դրած), որ ուրեմն ամէն ինչ պարզ է, ամէն ինչ որոշուած է: Հայաստանը Ռուսաստանի ֆորպոստ սարքած այս տղաները, սակայն, մոռանում են ուսուսական յայտնի

ասացուածքը, որը հայերէն տառերով ենք գրում, որպէսզի մեր քաղաքական «էլիտայի» մի հիմնական մասը այն լաւ կարգալու հնարաւորութիւն ունենայ. «Նե սկաթի գոպ, պակա նե պերեպրիգնեշ»: Իսկ մեր նորօրեայ իշխանաւորներին թուում է, թէ ժողովրդին թալանելու արդիւնքում իրենց ճարպակալած լիւնելը առանց թուշելու հոփ անելու իրաւունք է տալիս իրենց, եւ իրենք նստած տեղերից ոչ միայն «հոփ»-ով չեն բաւարարուած, այլեւ շախշուի են անում իշխանամէտ լրատուամիջոցների տաշիների տակ: Բայց տրամաբանութիւնը յուշում է, որ իշխանական ուժերը իրենց ծրագրերը իրականացնելու համար, այնուամենայնիւ, պէտք է թուշեն: Իսկ թէ թուշելուց յետոյ որտեղ վայրէջք կը կատարեն, սա է հիմնական խնդիրը: Նրանք համոզուած են, որ միւս ափին, իսկ գուցէ հեղեղի ամենակենտրոնում, որն էլ կը տանի նրանց դէպի այն եզերքները, որոնց իրենք արժանի են: Եւ ի դէպ, հենց սա է յեղափոխութեան տրամաբանութեան անբաժանելի մասն է, երբ իշխանութիւնը համոզուած է, որ իրադարձութիւնները կ'ընթանան այսպէս, այսպէս, այսպէս, իրենց կը յաջողուի անել այս, այս, այս, բայց իրադարձութիւնները բոլորովին այլ կերպ են զարգանում. հենց սա է կոչուած յեղափոխութիւն:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՈՍԿԷ ՇԱՌԻՐՄԱ

Բարեւ ձեզ, իմ սիրելի ընթերցողներ: Նախ, թող սուէք շնորհաւորել ձեր անցած տոները: Կերած-խմածներդ անուշ լինի: Անձամբ ես ամանորեայ տոներն անցկացրեցի այն երջանիկ գիտակցութեամբ, որ մեր հարագատ իշխանութիւններն, օր ու գիշեր աշխատելով ապահովում են իմ արժանավայել Հանգիստը: Դրանում ես, ի դէպ, նաեւ դուք կարող էիք համոզուել՝ դիտելով առաջին հետամանորեայ օրերին հեռարձակուած «Արմնիւզի» «Մայրաքաղաք» ծրագիրը, որտեղ պետական պաշտօնեաները, հասարակ քաղաքացիները սիրելի քաղաքապետի գովքն այնպէս էին անում, որ ընկ. Ստալինն ու ընկ. Կիմ իր Սենը կամաչէին:

Իսկայպէս, քաղաքապետարանի աշխատանքն արժանի է ամենայն յարգանքի: Պատկերացնում էք, ամանորեայ տոներից անցաւ ընդամէնը մի քանի օր, եւ քաղաքապետարանն արդէն կուսնեց, որ շտապ պէտք է զբաղուել աղբահանութեան գործերով: Սոցն յայտնագործութիւնն ամենայն հաւանականութեամբ այնքան էր զարմացրել Երեւանի փոխքաղաքապետին, որ նա շտապեց կիսուել լրագրողների հետ՝ հաւաստիացնելով, որ խիստ յանձնարարականներ են տրուել անմիջապէս զբաղուել աղբահանութեամբ: Յաւօք, փոխքաղաքապետը չճշդեց, թէ ինչ ժամկէտներում:

Զարմացրեց այս օրերին նաեւ ՀՀ ղեկավար Ռ. Քոչարեանը՝ ներկայ չլինելով Մայր Աթոռում Սբ. Ծննդեան պատարագին: Մի կողմից մեր երկրում հուշակուած է խղճի եւ դաւանանքի ազատութիւն, սակայն հետաքրքիր է, որ պարոն Քոչարեանը ներկայ չէր նաեւ ուղղափառ եւ կաթոլիկ պա-

տարագներին, եզրիական շամսին, հրէական խանուկային եւ մահմետական կուրբան բայրամին: Այս առնչութեամբ հարց է ծագում, թէ ո՞ր դաւանանքին է պատկանում մեր երկրի ղեկավարը: Մնում է սպասել Լենինի ծննդեան օրուան: Յամենայն դէպս, եթէ պատարագին ներկայ գտնուած ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանեանը պրն. Քոչարեանին ղեռուս չի զեկուցել, մենք այդ միսիան մեր վրայ ենք վերցնում. «Յիսուս ծնաւ եւ յայտնեցաւ, պարոն Քոչարեան»:

Մի խօսքով, այս շաբաթ էլ մեր պաշտօնեաները ապացուցեցին, որ բոլորն էլ արժանի են «Ոսկէ շառնամայի» փոխանցիկ դուռուծին, սակայն կարծում եմ, բոլորը կը համաձայնեն ինձ հետ, եթէ դուռուծը փոխանցուի Աժ պատգամաւոր Հմայեակ Յովհաննիսեանին, որը մեկնաբանելով իրաւապահ մարմինների կողմից ոմն Վ. Արոյեանի ձեռքակալութիւնը (վերջինիս տանը յայտնաբերուած էր մի այնպիսի զինանոց, որի առկայութիւնը Հայաստանում կարելի է բացատրել միայն ամերիկեան վեցերորդ նաւատորմի լուծարմամբ), նշեց, որ գէնք-գինամթերք պահելը պարզապէս պարոն Արոյեանի հոտաքրքիր տեսակէտ է: Շարունակելով այս միտքը, կարելի է խորհուրդ տալ մեր գոծարարներին այսուհետեւ հարկային տեսուչներին ասել, որ իրենք պարզապէս հաւաքում են ամերիկեան նախագահների նկարների կոլեկցիա, որը ոչ մի օրէնքով չի հարկուած:

Այսքանով թող սուէք աւարտել 2007 թ. առաջին «Ոսկէ շառնաման»: Մինչ նոր հանդիպումներ: Վ. ՂԱՍԱԲԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՎԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍՈՒՄ

Արդէն յայտնի է, թէ անցեալ տարուայ Դեկտեմբերի 26-ին Սերժ Սարգսեանի գլխին ինչ «օջին» բերեց Ռոբերդ Քոչարեանը, որը լրագրողների համար կազմակերպուած ամանորեայ ընդունելութեան ժամանակ այնքան էր տարուել «երկրորդ հնագոյն մասնագիտութեան» ներկայացուցիչների հետ անմիջական շփումներով, որ գնացել էր միայն այն ժամանակ, երբ թիկնագորայինները մօտեցել եւ «չէֆին» յայտնել էին, թէ արդէն գնալու ժամանակն է: Իսկ այդ շփման ընթացքում նա ասել էր մի կարեւոր բան, որ նախագահ կը դառնայ «ոչ նա, ում կարծում էք», իսկ երբ լրագրողները հնչեցրել էին Սերժ Սարգսեանի անունը, պարզապէս ծիծաղել է: Մենք արդէն առիթ ունեցել ենք մեր ընթերցողներին ներկայացնել, թէ ինչքան հիւանդագին է դա ընկալել ՀՀԿ խորհրդի նախագահը, որը անհրաժեշտ է համարել իր «20 տարուայ ընկերջից» դէմ առ դէմ պարզել, թէ այդ ամէնն ինչ է նշանակում:

Համ էլ Սերժ Սարգսեանի այն ասուլիսը, ուր վերջինս հիմնաւորում էր, որ իր առաջադրումը ՀՀ նախագահի պաշտօնում չի հակասում ՀՀ Սահմանադրութեանը, ինչ որ բան նշանակում է: Բայց միաժամանակ էլ հանրապետականների թեթեւ ձեռքով շրջանառութեան մէջ է դրուել այն, որ եթէ, օրինակ, Ռոբերդ Քոչարեանին այդքան հաճելի վարդան Օսկանեան յանկարծ առաջադրուի ՀՀ նախագահի թեկնածու, ապա նա Սահմանադրութեան հետ խնդիրներ կ'ունենայ 10 տարուայ քաղաքացիութիւն չունենալու պատճառով: Բացի այդ, վերջերս նոյն պաշտպանութեան նախարարը կարծես թէ սկսել է շատ հիւանդագին վերաբերուել այն հարցին, թէ ինչպէս է իր թանկագին անձը ներկայացուած նախագահական նստավայրի անմիջական հսկողութեան ներքոյ գտնուող հեռուստաալիքներով:

Բացի այդ, ԱԱԾ-ի հետ կապուած տարեկան շաբաթը սկանդալային բացառապատմանը, որ արուել են ազգային անվտանգութեան նախկին փոխնախարար Գուրգէն Եղիազարեանի ձեռքում, փաստացի ստեղծել են մի իրավիճակ, երբ գործնականում անհնար է դարձել ԱԱԾ-ի պետ կարգել Հրաչեայ Յարութիւնեանին (Կրակեմ Հրաչին), որն այդ յատուկ ծառայութիւնը սրբնաբար վերածելու էր Սերժ Սարգսեանի անձնական օգտագործման դուքանի: Դրան երէկ յաւելուեց եւ «Հայ կամաւորականների համախմբման» ներկայացուցիչ Արմէն Աղաեանի այն սկանդալային բացառապատմւմ, որ ԱԱԾ-ն ծրագրել էր ժիրայր Սէֆիլեանի ձեռքակալութեան պահին հրահրել հրաձգութիւն, որի արդիւնքում պէտք է դիակներ յայտնուէին: Եւ խոշոր հաշուով ժիրայր Սէֆիլեանի եւ վարդան Մալխասեանի անհեթեթքեական գործը մշտապէս յղի է սկանդալներով, որոնց սլաքն ուղղուելու է ընդդէմ Սերժ Սարգսեանի եւ նրա «հայերէն վատ խօսողների»:

Ներիշխանական հակամարտութեան շրջանակներում պէտք է դիտարկել եւ այն, որ Ռոբերդ Քոչարեանը հրաւիրել էր ուժայինների խորհրդակցութիւն (իսկ դրանց մի մասը հենց սերժական կազմեր են), ու եթէ օգտուենք հենց քոչարեանական հին բառապաշարից, այդ կառուցներին «կլիզմա» էր արել՝ պա-

հանջելով հետեւողականորէն պայքարել ստուերային տնտեսութեան դէմ: Իսկ ստուերից օգտուողների առիւծի բաժինը, ինչպէս յայտնի է բոլորին, կենտրոնացուած է հենց «սուպերնախարարի» մերձաւոր շրջապատում, եւ եթէ ՀՀ նախագահի խօսքը վերածուի գործի, ապա ՀՀԿ-ն կարող է բախուել նախընտրական սեւ փողերի այդքան անհրաժեշտ ռեսուրսի որոշակի պակասի խնդրին:

Դե, էլ չենք խօսում Դալար եւ Նալբանդեան գիւղերի գիւղապետերի սպանութիւններով ստեղծուած քաղաքական քիլլերութեան նախադէպի մասին, որը ինչպէս դժուար չէ կուսնել, այս տարուայ Աժ ընտրութիւնների շեմին կարող է եւ որոշակի շրջանակների մօտ բազմակի կրկնօրինակման գայթակղութիւն ստեղծել: Այսինքն, դժուար չէ տեսնել, որ թէեւ իշխանական տարբեր ուժեր փորձում են ինչ-ինչ փոխադարձ ընդունելի կանոններ ձեւաւորել, սակայն եւ սեփական հաւակնութիւններն ու խորթակը, եւ կոնկրետ զրպանային ու խմբակային շահերի բախումն այնքան են խորացել, կարծես թէ հատել են այն սահմանագիծը, որից յետոյ վերադարձ չկայ: Ի դէպ, ինչ վերաբերում է ախորժակներին, ապա ՀՅԴ-ն՝ ի դէմս Հրանդ Մարգարեանի, չթաքցրեց, թէ ինչի է ձգտում այդ «յոյժ յեղափոխական» կուսակցութիւնը: ՀՅԴ բիւրօյի ներկայացուցիչը շատ պերճախօս պատմեց հանրութեանը, թէ ինչ լաւ գործ կ'անեն դաշնակցականները, եթէ իշխանութիւնն ամբողջովին ընկնի իրենց ձեռքը: Սակայն ՀՅԴ-ի դժգոհութիւնը իշխանութիւնից դեռեւս չի յանգեցրել կոնկրետ որեւէ բանի. ժամանակին, օրինակ, ՕԵԿ-ը խորհրդարանում

Շաբ.ը էջ 4

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԻԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳՐ
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱՍԱԲԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՍՆԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՇԷՍ ԳԵՂԱՄԵԱՆ. «ԲԱՐԳԱԻԱԾ ԶԱՅԱՍՏԱՆ»-Ը ՍՏԵՂԾՈՒԵԼ Է Ի ԶԱԿԱԿՇԻՌ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Երկուշաբթի, Յունուար 15-ին «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ եւ խորհրդարանական խմբակցության ղեկավար Արտաշէս Գեղամեան լրագրողներին հետ հանդիպման ժամանակ յայտարարեց, թէ Ազգային ժողովի պատգամաւոր, գործարար Գագիկ Ծառուկեանը «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը ստեղծել է առաջիկայ ընտրութիւններին յետոյ իր եւ իր մերձակորներին անվտանգութիւնն ապահովելու համար՝ այդ կերպ հակաշիւստեղծելով պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանին՝ թոյլ չտալով, որպէսզի նա դառնայ Հայաստանի նախագահ:



«Ազգային միաբանութիւն» կուսակցութեան նախագահ Արտաշէս Գեղամեան

րարական իր բիզնես Սաշիկ Սարգսեանը [Սերժ Սարգսեանի եղբայրը, Ազգային ժողովի պատգամաւոր] սկսեց իրականացնել արդէն Ամերիկայի Միացեալ Նահանգներում»:

«Եւ, բնականաբար, մարդիկ գիտակցեցին, թէ ինչ ահաւոր իրավիճակ կը ստեղծուի Հայաստանի Հանրապետութիւնում, եթէ, Աստուած մի արասցէ, յանկարծ Սերժ Սարգսեանը դառնայ երկրի նախագահ», - շարունակեց ընդդիմադիր գործիչը: - «Ահա սա է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ստեղծման պայմանը»:

Եւ հետեւաբար, ըստ Արտաշէս Գեղամեանի, «Բարգաւաճ Հայաստան»-ը ոչ մի պարագայում չի պաշտպանի Սերժ Սարգսեանի թեկնածութիւնն առաջիկայ նախագահական ընտրութիւններում:

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԶԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿԸ ԵՍ ՊԵՏՔ Է ԳԼԽԱՒՈՐԵՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Տրամաբանութիւնը բոլորիս յուշում է, որ ես պէտք է գլխաւորեմ», - այսպէս պատասխանեց Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանը «Ազատութիւն» ռատիոկայանի այն հարցին, թէ ո՞վ է գլխաւորելու առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում Հանրապետական կուսակցութեան համամասնական ցուցակը՝ Ի՞նչքը, թէ՞ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը:

Անդրանիկ Մարգարեանը Հանրապետական կուսակցութեան նախագահն է, Սերժ Սարգսեանը՝ Հանրապետականի խորհրդի նախագահը եւ կուսակցութեան նախագահի առաջին տեղակալը:

Ըստ վարչապետի, Հանրապետական մինչեւ ընտրութիւնները համագումար չի անցկացնի, իսկ համամասնական ցուցակը կը հաստատուի կուսակցութեան խորհրդի նիստում, որը, ամենայն հաւանականութեամբ, տեղի կ'ունենայ Փետրուարի վերջին:

Որպէս խորհրդարանական ընտրութիւնների անցկացման ամենահաւանական օր Անդրանիկ Մարգարեանը նշեց Մայիսի 12-ը, որը շաբաթ է, սակայն, նրա հաւաստմամբ, ոչ աշխատանքային կը լայտարուի: Այդ օրը սահմանուելու դէպքում, ըստ Անդրանիկ Մարգարեանի, համամասնական ցուցակները պէտք է ներկայացուեն Փետրուարի 26-ից մինչեւ Մարտի 3-ը:

մամբ, ոչ աշխատանքային կը լայտարուի: Այդ օրը սահմանուելու դէպքում, ըստ Անդրանիկ Մարգարեանի, համամասնական ցուցակները պէտք է ներկայացուեն Փետրուարի 26-ից մինչեւ Մարտի 3-ը:

«Իսկ շատ է փոխուելու ցուցակը նախորդի համեմատ: Մամուլը գրում է, որ 1 միլիոն դոլար արժէքի ցուցակում ընդգրկուելը», - այս հարցին վարչապետն արձագանգեց. - «Մի լուծում չարժէ, պարզապէս քաղաքական որոշում է լինելու: Այլ բան չեմ ասում. ամսի 26-ից յետոյ, երբ ցուցակը պարզ կը լինի, այն ժամանակ կը խօսենք»:

Ինչպէս հաւաստիացրեց Անդրանիկ Մարգարեանը, Հանրապետական կուսակցութեան համամասնական ցուցակում գործարարների թիւը նուազագոյնի է հասցուելու:

Իսկ կանանց թիւը, վարչապետի խօսքերով, Հանրապետականի ցուցակում զգալիօրէն աճելու է. - «Օրէնքն ի՞նչ է պահանջում՝ առնուազն 15 տոկոս ցուցակում պէտք է կանայք լինեն, եւ մենք դա կ'ապահովենք»:

Ներկայիս գումարման խորհրդարանում 40-հոգանոց հանրապետական մեծամասնութիւնից ընդամէնը 2-ն են կին:

«ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԸՆԴՈՒՄ Է ԳԼԽԱՎՈՐԵՄ», - ՆԿԱՏԵԼ Է ԹՈՒՐԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայ-թուրքական տնտեսական յարաբերութիւնները զարգացնելու նպատակով Հայաստան ժամանած թուրք գործարարներից մէկն ինքնուրոյն այցելել է 1915թ. Հայոց Ցեղասպանութեան Թանգարան: «Երբ նա վերադարձաւ, ինձ ասաց, որ իսկապէս շատ տխուր է, սակայն հայերն այնքան էլ լաւ չեն պահում այդ թանգարանը՝ քանդուած եւ պոկուած բաներ կան թանգարանում», - Յունուար 15-ին հայ լրագրողների հետ հանդիպման ընթացքում ասաց թուրք-հայկական տնտեսական համագործակցութեան յանձնաժողովի նախագահ Քասան Սոյակը:

Նա վստահեցրեց, որ անկախ այն հանգամանքից, որ երկու երկրների միջեւ չկան դիւանագիտական յարաբերութիւնների թուրքիայում այսօր բաւականին դրական տրամադրութիւններ են ձեւաւորուել հայերի նկատմամբ: Իսկ ինչպէ՞ս են արտայայտուում այդ տրամադրութիւնները. «Ա1+»-ի հարցին՝ պարոն Սոյակը պատասխանեց. «Ալիս անուամբ մի հայ լրագրող անցեալ տարի այցելեց թուրքիայի խորհրդարան եւ գրեթէ բոլորի հետ հարցազրոյցներ վարեց: Խորհրդարանի մեծամասնութիւնը յայտարարեց, որ կողմ է հայ-թուրքական սահմանի բացմանը»: Որպէս թուրքական կողմի ներկայացուցիչ Քասան Սոյակը վստահեցրեց, որ հայ-թուրքական սահմանի իրական խոչընդոտը ոչ թէ 1915թ-ի ցեղասպանութիւնն է, այլ՝ ԼՂ հիմնախնդիրը:

դարան եւ գրեթէ բոլորի հետ հարցազրոյցներ վարեց: Խորհրդարանի մեծամասնութիւնը յայտնեց, որ կողմ է հայ-թուրքական սահմանի բացմանը»: Որպէս թուրքական կողմի ներկայացուցիչ Քասան Սոյակը վստահեցրեց, որ հայ-թուրքական սահմանի իրական խոչընդոտը ոչ թէ 1915թ-ի ցեղասպանութիւնն է, այլ՝ ԼՂ հիմնախնդիրը:

Նա նաեւ նշեց, որ հայ-թուրքական յարաբերութիւնների բարելավման մասին է վկայում նաեւ այն փաստը, որ թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժին առաջինը արձագանգեց Հայաստանը. «Թուրքիայի ԱԳ նախարարութիւնը երկմտում էր՝ ընդունել, թէ՞ ոչ Հայաստանի օգնութիւնը, սակայն գիտութիւնը որոշեց, որ անմիջապէս անհրաժեշտ է ընդունել: Այդ փաստն արձանագրուած է նաեւ ՀՀ ԱԳ նախարարութիւնում»:

Ի դէպ, դիւանագիտական յարաբերութիւնների բացակայութեան պայմաններում այսօր կարս-Երեւան երկաթգծով տարեկան 10 միլիոն թոննա բեռնափոխադրում է կատարուում:

ԺՈՂՈՎՈՐԴԻ 60 ՏՈԿՈՍԸ ԴԺԳՈՅ Է ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱ-ԳԻՐ»: Հայաստանի ընտրողների 60 տոկոսը դժգոհ է իշխանութիւնից եւ ունի ընդդիմադիր տրամադրութիւն: Այդ ուսումնասիրութիւնը վկայակոչել է ոչ թէ ինչ որ ընդդիմադիր կուսակցութիւն, այլ նախարարական պորտֆել ունեցող քաղաքական մի ուժ՝ որ ստեղծել ու ղեկավարում է գործարար Գուրգէն Արսէնեանը: ՄԱԿ նախագահը Յունուարի 16-ին «Փաստարկ» ակումբում յայտարարեց, որ բնակչութեան 60 տոկոս ընդդիմադիր լինելը նշանակում է, որ մարդիկ դժգոհ են իշխանութիւնից: Եթէ ընդդիմութիւնը իր ռեսուրսները կենտրոնացնի մի տեղ, ապա Գուրգէն Արսէնեանը չի բացառում, որ հնարաւոր է ֆորս մաժոր:



ՄԱԿ նախագահ գործարար Գուրգէն Արսէնեան

կան համարում, որ կարող է իրավիճակը փոխուել: Դա վկայում են իրենց ուսումնասիրութիւնները: «Այդ գործընթացների մէջ հնարաւոր, պոտենցիալ գործողութիւնները, որը որ առայժմ էս չեմ տեսնում, կարող են բերել նրան, որ ձեւաւորուի միաբեւեռ ընդդիմադիր դաշտ եւ այդ ողջ ռեսուրսն ուղղուի այդ գործողութեանը: Հնարաւոր է: Չկայ այդ գործողութիւնը, եւ ես ասեմ նաեւ, որ ժամանակը գնալով անհնար է դարձնում այդ գործողութեան իրականացումը», ասում է Գուրգէն Արսէնեանը: Նրա խօսքով, եթէ ընդդիմութիւնն այնուամենայնիւ ձեւաւորի մէկ բեւեռ եւ առաջնայ ֆորս մաժորային իրավիճակ, ապա ՄԱԿ-ն էլ կը փորձի հակառակ բեւեռը ձեւաւորել: Այդ բեւեռը կը լինի ազատական, քանի որ Գուրգէն Արսէնեանը հաւատարիմ է այդ գաղափարներին:

Իսկ քանի դեռ ֆորս մաժոր չկայ, ՄԱԿ-ը հակուած է ընտրու-

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԱՍԲ ԸՆԿՆԱՍՏԱՆ 32-ՐԴՆ Է

Տնտեսական ազատութեան մակարդակով Հայաստանն աշխարհում գրաւում է 32-րդ տեղը: Այդ է վկայում Heritage Foundation կազմակերպութեան՝ այսօր հրատարակած «2007 թուականի տնտեսական ազատութեան ցուցիչը»: Անցած տարուայ նոյն ցուցակում Հայաստանը 27-րդն էր:

ԱՊՀ-ի երկրներից Հայաստանում տնտեսութիւնն ամենաազատն է: Վրաստանը գրեթէ մօտեցել է Հայաստանին եւ զբաղեցնում է 35-րդ տեղը: 161 երկրների ցուցակում Ատրպէյճանը 107-րդն է: Ամենաազատ տնտեսութիւնն ունի Հոնկոնգը: Ցուցակը եզրափակում է Իրաքը:

Ընդդիմութիւնն, օրինակ, այդ ներկայացուածութիւնը չունի, ասում է ՄԱԿ ղեկավարը: Բայց հաւանա-

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ ԸՆԴԱՄԵՆԸ ՎԵՑ ԱՄՍՈՎ ԿՐՃԱՏԵՑ ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆԻ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Զինուորական գործերով վերաքննիչ դատարանը Ուրբաթ, Յունուար 12-ին «Ժամանակ-Երեւան» օրաթերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանեանին դատապարտեց 3 տարի 6 ամիս ազատազրկման՝ հիմնադրուած համարելով առաջին ատենանի դատարանի վճիռը: Վերաքննիչ սոսկ վեց ամսով կրճատեց պատժի չափը:



Քաղաքական բանտարկեալ Արման Բաբաջանեան

Անցած Յունիսին առաջին ատենանի դատարանը Բաբաջանեանին փաստաթուղթ կեղծելու միջոցով պարտադիր գինուորական ծառայութեան խուսափելու համար դատապարտել էր 4 տարուայ ազատազրկման:

Դատական նիստին ներկայ չէին Արման Բաբաջանեանի փաստաբանները: Նիստը նախագահող Արշակ Խաչատրեանը «անյարգելի» որակեց նրանց բացակայութիւնը եւ որոշեց նիստը վարել առանց պաշտպանների:

Մինչդեռ փաստաբաններ Զարուհի Փոստանջեանն ու Հայկ Ալումեանը միջնորդութիւն էին ներկայացրել դատարանին՝ նիստը լետաձգելու խնդրանքով՝ հաշուի առնելով, որ միջգերատեսչական յանձնաժողովը դեռեւս որոշում չի կայացրել Արման Բաբաջանեանի խնդրանքի կապակցութեամբ: Բաբաջանեանը պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի գլխավորած այդ յանձնաժողովին խնդրել էր իր նկատմամբ եւս կիրառել «Սահմանուած կարգի խախտմամբ պարտադիր գինուորական ծառայութիւն չանցած քաղաքացիների մասին» օրէնքը, ըստ որի նա հնարաւորութիւն ունի իւրաքանչիւր բաց թողնուած գորակոչի դիմաց համապատասխան տուգանք վճարելով ազատուել քրէական հետապնդումից: Յանձնաժողովը, սակայն, այդպէս էլ որոշում չկայացրեց ընդդիմադիր թերթի խմբագրի

խնդրանքի կապակցութեամբ: Արշակ Խաչատրեանը մերժեց պաշտպանական կողմի միջնորդութիւնը եւ առանց փաստաբանների, առանց պաշտպանական ճառի, Արման Բաբաջանեանին առաջարկեց օգտուելով իր իրաւունքից եւ վերջին խօսքի ասել: Բաբաջանեանն ասաց, որ ինքն առանց փաստաբանների չի կարող վերջին խօսքն ասել: Յետոյ յայտարարեց, որ հրաժարուած է իր պաշտպաններից եւ խնդրում է իրեն նոր պաշտպաններ ունենալու հնարաւորութիւն տալ: Այդ խնդրանքը դատարանը նոյնպէս մերժեց:

Փաստաբան Զարուհի Փոստանջեանի համոզմամբ, այն, որ դատարանը վճիռ կայացրեց առանց պաշտպանական ճառերի, առանց ամբաստանեալին վերջին խօսքի իրաւունք տալու, արդէն վճռի բեկանման հիմք է տալիս:

«Մենք գնալու ենք եւ վճռաբեկ դատարան, եւ Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարան, եւ Սահմանադրական Դատարան», - «Ազատութիւն» ռատիոկայանին ասաց Զարուհի Փոստանջեանը՝ պնդելով, որ իր պաշտպանեալի նկատմամբ խտրական մօտեցում է ցուցաբերուել:

ԸՍՏ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ, 15 ՏԱՐՈՒԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ՇՈՒՐՁ 635 ՀԱԶԱՐ ՍԱՐԴ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «1989 թուականից մինչեւ 2004 թուականը Հայաստանը լքել է շուրջ 635 հազար մարդ», - պնդում են Համաշխարհային Բանկի փորձագէտները՝ յատուկ նշելով, որ այդ ցուցանիշի մօտ մէկ երրորդը արձանագրուել է 2000-ից 2003 թուականների միջեւ ընկած ժամանակահատուածում:

1000 բնակչին բաժին ընկնող արտագաղթողների թուով Հայաստանը, պարզուած է, աշխարհի առաջատարներից մէկն է՝ զիջելով միայն Ճամայկային, Բոսնիային, Ալբանիային ու Սլովենիային: 1000 բնակչին, ըստ Համաշխարհային Բանկի փորձագէտների, Հայաստանում 300 արտագաղթող է բաժին ընկնում: ԱՊՀ-ի երկրներից սա ամենաբարձր թիւն է, որ զգալիօրէն գերազանցում է անգամ արտագաղթի առումով ռեկորդներ սահմանած Ղազախստանի ու Մոլդովայի ցուցանիշները: Բնակչութեան մաքուր կորուստը՝ տոկոսային ցուցանիշով, ըստ Համաշխարհային բանկի, Հայաստանում աւելի քան 18 տոկոս է կամ 635 հազար մարդ:

Բանկի փորձագէտները յատուկ նշում են, որ դիտարկուած բոլոր երկրների՝ այդ թւում Հայաստանի, դէպքում արտագաղթածների պաշտօնական թիւը ընդգրկում է միայն երկրից մշտապէս հեռացած ան-

ձանց՝ անտեսելով կարճ ժամանակով հայրենիքը լքած քաղաքացիներին:

Այսպիսով, հիմնուելով Ազգային վիճակագրական Մատչելիութեան ու ԵՈՒՆԵՍԿՕ-ի տուեալների վրայ, Համաշխարհային Բանկի մասնագէտներն արձանագրում են, 1989 թուականին Հայաստանի բնակչութիւնը մօտ 3,5 միլիոն էր, այսօր՝ 3 միլիոն 212 հազար:

Միգրացիայի հասցրած կորուստները Հայաստանը կարողանում է լրացնել միայն բնական աճի՝ համեմատաբար բարձր ցուցանիշի շնորհիւ (2004-ի տուեալներով՝ 11,06 տոկոս): Համաշխարհային բանկի հաշուարկներով, 15 տարուայ ընթացքում՝ 1989-ից մինչեւ 2004 թուականը, Հայաստանի Հանրապետութիւնում 399 հազար երեխայ է ծնուել:

Բացի այդ, փորձագէտները փորձել են պարզել, թէ ուր են մեկնում Արեւելեան Եւրոպայի ու ԱՊՀ-ի պետութիւնների բնակիչները: «Ինչպէս եւ միւս հարակից կասեան երկրների բնակիչները՝ հայաստանցիները հիմնականում ձգտում են դէպի Ռուսաստանի Դաշնութիւն», - համոզուած են գեկոյցի հեղինակները:

Պաշտօնական տուեալներով, 1989-ից մինչեւ 2003 թուականը Հայաստանից միայն Ռուսաստան մշտական բնակութեան է տեղափոխուել 223 հազար մարդ:

JANE'S. « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ ԿԸ ԽՈՐԱՆԱՅ »

Jane's հետազոտական կենտրոնի Յունուար 17-ին հրատարակած կանխատեսման համաձայն՝ 2007 թուականին Հայաստանի տարածաշրջանային մեկուսացումը, ամենայն հաւանականութեամբ, կը խորանայ:

«Այս տարի, հաւանաբար, լուրջ փոփոխութիւն կը կատարուի Հարաւային Կովկասի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքում, քանի որ Ատրպէյճանի էներգետիկ պաշարները եւ Վրաստանի շարունակուող ձգտումը դէպի Արեւմուտք նրանց աւելի ու աւելի անկախ են դարձնում Մոսկուայից: Միեւնոյն ժամանակ Հայաստանի տարածաշրջանային մեկուսացումը, ամենայն հաւանականութեամբ, կը խորանայ: Սա կարող է բացասական ազդեցութիւն ունենալ տարածաշրջանի անջատողական հակամարտութիւնների վրայ՝ լարուածութիւնը կը շարունակուի, իսկ Լեռնային Ղարաբաղի դէպքում՝ կը սաստկանայ

տարուայ ընթացքում», - կանխատեսում են հեղինակաւոր հետազոտական կենտրոնի փորձագէտները:

«Բոլոր դէպքերում, եթէ Արեւմուտքի ուշադրութիւնը առաւելութիւն ստեղծի Ատրպէյճանի համար, Հայաստանը, ամենայն հաւանականութեամբ, ի պատասխան կը սերտացնի կապերը Ռուսաստանի հետ: Արդիւնքում երկու կողմերը աւելի խորը կը խրամատաւորուեն երկու ընդդիմադիր ճամբարներում՝ առանձին եւ մրցակցող միջազգային աջակիցներով», - գտնում են հետազոտական կենտրոնի փորձագէտները:

«Ամենայն հաւանականութեամբ, դրսի ուժին է պատկանելու վճռորոշ խօսքը՝ ո՞ր ուղղութեամբ է շարժուելու Հարաւային Կովկասը 2007 թուականին: Տարածաշրջանը բախտի քմահաճոյքին թողնելը դժուար թէ համապատասխանի որեւէ մէկի շահերին», - եզրակացնում են Jane's-ի մասնագէտները:

ՈՐՔԱՆՈՎ ՊԱՏՐԱՍ Է ՂԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Շարունակուած էջ 1-էն

առաքելութիւն իրականացնելու համար, Քրիստիան Շտրոհալ պատասխանած է. - «Անշուշտ: Բաւարար ժամանակ կայ: Որքան ես գիտեմ ընտրութիւնները Մայիսին են, իսկ այսօր դեռեւս Յունուար է»:

Ազգային ժողովէն ներս ներկայացուած քաղաքական ուժերու ներկայացուցիչներու հետ հանդիպումէն յետոյ Հանրապետական Կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան անդամ Սամուէլ Նիկոյան «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է. - «Դիտորդական առաքելութեան հրաւերը կը լինի եւ

կարճաժամկէտ, եւ երկարաժամկէտ: Դրանից առաջ կը գայ կարիքների գնահատման խումբը, կը հանդիպի բոլոր քաղաքական ուժերի հետ»:

Ընդդիմադիր «Արդարութիւն» խմբակցութեան քարտուղար Գրիգոր Յարութիւնեանի կարծիքով, սակայն, դիտորդական առաքելութիւն պէտք էր հրաւիրել անցած ամիս իսկ: Հիմա երկարաժամկէտ դիտորդական առաքելութիւնը, ըստ Յարութիւնեանի, կրնայ իրականացուել առաւելագոյն երկու ամսուայ ընթացքին. - «Իսկ այսօրուայ իրողութիւններում աւելի ճիշդ կը լինի, որ աւելի երկարաժամկէտ լինի»:

ԿԸ ՄԵՂԱԴՐԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

պուլիւնը կը շարունակէ մեծ ուշադրութեամբ հետեւիլ չորս տարիէ ի վեր փակ մնացող «Ա1+» հեռուստաընկերութեան պատմութեան եւ կը յայտնէ, որ անցած տարուայ ընթացքին «Ա1+»-ը երկու անգամ դիմած է հեռարձակման արտօնագիր ստանալու համար եւ երկու անգամն ալ մերժուած է:

Լրագրողներու դէմ իրականացուած բռնութիւններու շարքին միջազգային կազմակերպութիւնը կը մատնանշէ Վանաձորի «Լոուի» հեռուստաընկերութեան գործադիր տնօրէն Նարինէ Աւետիսեանի ու «Զորորդ իշխանութեան» լրագրող Գագիկ Շամշեանի դէմ յարձակումները, «Իրաւունք»-ի խմբագրի ծեծն ու «Ժամանակ երեւան»-ի խմբագրի ազատագր-

կումը: Այս բոլոր դէպքերու ընթացքին լրագրողները բռնութեան ենթարկուած են իրենց մասնագիտական գործունէութեան պատճառով:

Յատուկ կէտով «Մարդկային Իրաւանց Հսկիչի» մասնագէտները անդրադարձած են նաեւ սեփականութեան իրաւունքի ոտնահարման դէպքերուն: «Անցնող երկու տարիներու ընթացքին Հայաստանի կառավարութիւնը ստիպեց հարիւրաւոր երեւանցիներու լքել իրենց տունները՝ որոնց դիմաց վճարելով շուկայականէն ցածր գին: Ու թէեւ Սահմանադրական դատարանը այս գործընթացը անօրինական որակեց, կառավարութիւնը, այդուհանդերձ, չվերանայեցաւ սեփականութեան դիմաց քաղաքացիներուն տրամադրուած փոխատուցման չափը», - կը յայտնեն միջազգային կազմակերպութեան իրաւապաշտպանները:

ՂԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍՈՒՄ

Շարունակուած էջ 2-էն

բազմիցս էր ներկայացրել ժողովրդականութիւն վայելող օրէնսդրական նախաձեռնութիւններ, եւ ի վերջոյ, տեսնելով, որ կոալիցիայի ներսում բան չի ստացուած, գնացել էր ընդդիմադիր դաշտ: Դաշնակցականները գոնէ առայժմ կարծես թէ

մտադիր չեն կիրառել Արթուր Բաղդասարեանի փորձը եւ գերադասում են «դէմ ըլլալով՝ կողմ հանդէս գալ», թէեւ պարզ չէ, թէ ապագայում ինչ կ'անեն կամ չեն անի. ի վերջոյ, հրագնէի վրայ երդում տալու աւանդուած ունեցող կուսակցութիւն է ՀՅԴ-ն...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՃԵԱՆ

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

«ԵԹԵ ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԼԻՆԻ, ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՂ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՏԵՐԸ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԵՆ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՅԼ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ»

Օրինաց երկիր կուսակցութեան (ՕԵԿ) փոխնախագահ, ԱԺ պատգամաւոր Մհեր Շահգեղեանին ուղղուած հարցերը հիմնականում առնչուում էին գալիք խորհրդարանական ընտրութիւններին, ընդդիմութեան միաւորման հարաւորութիւններին:

«Ի՞նչ կարծիքի էք հայ կամաւորների համախմբման նախաձեռնութեան եւ ազգի նուիրեալներ ժիրայր Սէֆիլեանի ու Վարդան Մախասեանի նկատմամբ ռեժիմի դրսեւորած վերաբերմունքի մասին:

«Հայ մարդն իսկապէս աշխատող եւ արարող է, եւ երբ որ մենք ուսումնասիրում ենք կայացած պիւլուքը, այնտեղ, որպէս կանոն, աղքատներ չկան: Այդ ինչպէ՞ս է լինում, որ պիւլուքում, ուր կա ժողովրդավարութիւն, նորմալ տնտեսվարելու հարաւորութիւն, հայ մարդը կարողանում է նորմալ աշխատել, ապրել, իսկ Հայաստանում չի կարողանում, աղքատութեան մէջ է: Իսկ կան օլիգարխներ, որոնք հսկայական հարստութիւն ունեն, որը կուտակուել է սովորական քաղաքացու հաշուին:

Իսկ ինչ վերաբերում է ժիրայր Սէֆիլեանին, ապա նա անցել է պաշարի բովով, վաստակ ունի: Նա պիւլուքի ներկայացուցիչներին է, որը եկել է իր արեամբ պաշտպանելու Հայաստանի Հանրապետութիւնը: Միաժամանակ ընթանում է քննութիւն:

«Երբ ցանկանում են արտաքսել հայրենիքից, նրան հայրենի՞ք են արտաքսում:

«Գիտէք, հարցը մի փոքր լայն կը ձեւակերպէի՝ անդրադառնալով մեր ազատամարտիկների հիմնադիրներին: Ցաւօք, այսօր բազմաթիւ ազատամարտիկների եւ սոցիալական վիճակը, եւ իրաւական պաշտպանութիւնը իրիստ վատ է: Իր երկրի համար գինուոր եղած մարդը իրաւունք չունի այնպէս ապրել, ինչպէս ապրում է: Ես բազմիցս հանդիպել եմ գոհուած, հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքների հետ. պետութիւնը պիտի կարողանայ գնահատել նրանց կատարածը: Մենք պէտք է կարողանանք գնահատել ու յարգել նրանց, որ յաջող սերունդները՝ մեր երեխաները, տեսնեն, որ երկրի համար ծառայած ազատամարտիկը պետութեան մէջ պաշտպանուած է: Դեռեւս յանձնաժողովի նախագահ եղած ժամանակ նախաձեռնեցինք օրինագիծ՝ ազատամարտիկների կարգավիճակի եւ վերջինի իրաւական ամրագրման վերաբերեալ: Ուղ-

ղակի կան խնդիրներ, որոնք առնչուում են միջազգային իրաւունքին: Ներկայումս ՕԵԿ-ում աշխատում ենք՝ ձգտելով օրհնադրօրէն եւ համակարգային կերպով այդ հիմնախնդիրներին լուծում տալ:

«Ոչ պաշտօնական նախընտրական քարոզի շրջանակներում Նոյեմբերի 29-ին 33 պաշտպանութեան նախարարը հայրենիք վերադարձրեց Զօրավար Անդրանիկի սուրը եւ մեղաւնորդ ու դրանք նուիրեց թանգարանին: Ասուեց, որ մի հայ միջնորդել եւ գնել է անգլիացուց: Անդրանիկի պատրաստած հասարակ աթոռի համար մարդիկ ուզում են միլիոններ վճարել, ինչպէ՞ս պատահեց, որ մի քանի մետալ յայտնուել է անգլիացու մօտ: Ես գնացի թանգարան ու հարցրի՝ ինչպէ՞ս կարող էք ապացուցել, որ դա Անդրանիկի սուրն է, բայց այդպէս էլ յստակ պատասխան չստացայ:

«Մեր ազգային մասունքների, ազգային հերոսների իրերի ու յատկապէս գէնքի, մետաղների, այսինքն՝ պատուոյ եւ վաստակի նկատմամբ յարգանքի արտայայտութեան հարցում, բնականաբար, պէտք է շատ յստակ, պատասխանատու, հաւասարակշիռ մօտեցում ցուցաբերենք, որովհետեւ սա պատմութիւն է, որով յետոյ դաստիարակուելու են մեր սերունդները: Ծատ գերադասելի է, որ իւրաքանչիւր իրի, յատկապէս գէնքի, հայրենիք բերելու պատմութիւնը լինի շատ բաց, պարզ, որպէսզի ժողովուրդն իսկապէս իմանայ եւ հասկանայ՝ ինչպէս ձեռք բերուեց, ումից, սա մեր ազգի պատմութիւնն է, իսկ պատմութիւնը սուրբ է, քանի որ այն ժողովրդի յիշողութիւնն է:

«ՕԵԿ-ն արդէն մի քանի ամիս գտնուում է ընդդիմադիր դաշտում: Ինչպէ՞ս ձեռնդրուեց ընդդիմադիր դաշտը (չնայած, այդ դաշտը որեւէ մէկի կողմից սեփականաշնորհուած չէ, եւ ժողովուրդն է որոշելու, թե ով ով է): Իշխանութեան մէջ էիք ձեռք աւելի վստահ գգում, թէ՞ ընդդիմադիր դաշտում:

«ՕԵԿ-ը քննադատական եւ ընդդիմադիր կեցուածք միշտ ունեցել է, եւ պատահական չէ, որ կողմնակիցի մէջ եղած ժամանակ մեզ յաճախ ասում էին, որ մենք ընդդիմութիւն ենք կողմնակիցի մէջ, ու երբեմն հարց էին տալիս՝ լաւ, դուք ընդդիմութիւն էք, թէ՞ իշխանութիւն: Դա նշանակում է, թէ՛ կողմնակիցի մաս կազմելու ժամանակ, թէ՛ այժմ մենք միշտ իրերը կրէք եւ իրենց անուններով, այն, ինչը քննադատելի է եղել, միշտ քննադատել ենք: Լաւին լաւ ենք ասել, վատին՝ վատ:



«Մենք միշտ ունեցել ենք մեր կայուն ընտրազանգուածը, համակիրները, մարդիկ, ովքեր մեզ համակրում էին կողմնակցում եղած ժամանակ, շարունակում են համակրել նաեւ այժմ: Աւելին, կողմնակից դուրս գալուց յետոյ արդէն աւելի քան 50 հազար մարդով համալրուել են մեր կուսակցութեան շարքերը: Սա այն բանի արտայայտութիւնն է, որ մարդիկ իրական յոյսեր են կապում ՕԵԿ-ի հետ: Իսկ լաւ կամ վատ զգալու խնդիր պարզապէս չկայ, որովհետեւ մենք շատերի նման չենք փորձել երբեք իշխանութեան մաս կազմելու հարստութիւն, ունեցուածք կուտակել: Այսինքն՝ իշխանութիւնը մենք միշտ դիտարկել ենք որպէս պարտականութիւն: Երբ դու մտնում ես քաղաքականութիւն, արդէն պարտականութիւն ունես ժողովրդի նկատմամբ, որովհետեւ դու դիմում ես քաղաքացուն, ասում ես՝ ահա այս ծրագիրն է, որը մեր կուսակցութիւնը փորձելու է իրականացնել: Ժողովրդի քուէն պարտաւորեցնող է, այն ինքնին պատասխանատուութիւն է, եւ այդ քուէով արտայայտուած վստահութիւնը պէտք է արդարացնել: Իշխանութիւնը երկակի, եռակի եւ քառակի պարտականութիւն է: Մենք իշխանութեան եկանք փոփոխու-

թիւններ կատարելու համար, եւ առաւելագոյնը, ինչ որ հնարաւոր եղաւ, կատարեցինք: Սակայն իշխանութիւնը մեզ համար ինքնանպատակ չէ, ու երբ փոփոխութիւնների ուղղուած մեր նախաձեռնութիւնները աւելի եւ աւելի յաճախ կողմնակիցներով, եւ դրանք հնարաւոր չէր լինում իրականացնել, մենք դուրս եկանք կողմնակիցից:

«Սայիսի կէսերին, ամենայն հաւանականութեամբ, կը կայանան խորհրդարանական ընտրութիւնները: 35 արաւոր է, որ ընդդիմադիր դաշտն ամբողջովին միաւորուի մի գաղափարի շուրջ, պէտք է կր լինեն տարբեր դաշինքներ:

«Մենք կարեւորում ենք ընդդիմադիր դաշտի համախմբումը: Միաժամանակ այսօր դեռ վաղ է կանխատեսել, թէ՛ այդ համախմբումն ինչպիսին կը լինի: Ես կարծում եմ, որ ամէն դէպքում միաւորումներ կարող են լինել, սակայն ինչպիսիք, ժամանակին կ'երեւայ: Միաւորման առաջին հիմքը ծրագրային, գաղափարական մօտեցումների ընդհանրութիւն կարող է լինել: Կարեւորագոյն խնդիր-

Մար.ք էջ 6

Advertisement for Blue Cross of California. It features a circular diagram showing various PPO Share options: PPO Share 2500 & 3500, PPO Share 1500, PPO Share 1000, PPO Share 500, PPO Saver, and Basic PPO 1000 & 5000*. Below the diagram, it says 'Now Available RightPlan PPO 40'. The main text reads: 'Featuring PlanScape® Keeping Californians Covered... The Power of Blue SM Health coverage for every household member and every household budget. Affordable plans for the whole family. SM'. At the bottom, it states: 'Blue Cross of California and BC Life & Health Insurance Company are independent licensees of the Blue Cross Association. The Blue Cross name and symbol are registered service marks of the Blue Cross Association.'

Advertisement for A.B.A. Insurance Services celebrating a 30th Anniversary (1975-2005). It features a cartoon illustration of a man in a suit running. The text includes: 'A.B.A. INSURANCE SERVICES', 'BEDROS SIAMANTO MARONIAN', '818-500-9585 805 East Broadway, Glendale, CA 91205', 'ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"', and 'AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056'. The Blue Cross of California logo is also present.

ԵԹԵՒ ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԼԻՆԻ

Շարունակում էջ 5-էն

րը, որը, ես կարծում եմ, կարող է ընդդիմութեանը մղել ջանքերի համադրման, նորմալ ընտրութիւնների անցկացումն է: Սա շատ կարեւոր է եւ մեր երկրի ներքին զարգացման համար, եւ միաժամանակ աշխարհաքաղաքական նշանակութիւն ունի այսօր: Դա կարեւոր է նաեւ ժողովրդի կենսական ուժերի բացառապատման համար, որովհետեւ սեղմուած պայմաններում այդ կենսական ուժերը չեն բացառապատում, մարդիկ արդեն քուէարկում են ոտքերով. լքում են երկիրը: Եւ եթէ երկրում տիրող այս իրավիճակը շարունակուի, աւելի շատ մարդիկ կը լքեն հայրենիքը, իսկ դա շատ ծանր հետեւանքներ կ'ունենայ: Կը ցանկանայի նշել, որ ՕԵԿ-ն այսօր Հայաստանի ամենաբազմամարդ եւ հզօր կուսակցութիւններից է, մենք ունենք լուրջ ներուժ՝ խորհրդարանական ընտրութիւնների գնալու եւ միայնակ, եւ որոշակի միաւորումներու: Իսկ թէ դա ինչպիսին կը լինի, ապագան ցոյց կը տայ:

-Ազատ, արդար ընտրութիւնների, ժողովրդավարութեան մասին խօսում են նաեւ բազմաթիւ պաշտօնեաներ, իշխանութիւնները, բայց, օրինակ, ԱԺ ԳԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանն արդէն կոնկրետ թուեր է բերում, թէ որ կուսակցութիւնը քանի տոկոս քուէ է ստանալու: Խօսակցութիւններ են պատուում, որ, օրինակ, ԳԿ համամասնական ցուցակի անցողիկ հատուածում ընդգրկուելու համար մէկ միլիոն դոլար գումար են պահանջում: Ընդդիմութիւնը ինչպէ՞ս կարող է պայքարել արդար ընտրութիւնների համար:

-Հայաստանի քաղաքական դաշտի մի հատուածում կարեւորագոյն խնդիրներից մէկը մտքի, խօսքի եւ գործի տարբերութիւնն է. մտածում են մի բան, ասում՝ այլ բան, անում՝ բոլորովին այլ բան: Շատերն են խօսում, բայց արդեօ՞ք քայլեր շատերն են անում, ցաւօք, ոչ: ՕԵԿ-ը պայքարում է յանուն օրէնքի գերակայութեան, եւ այդ ուղղութեամբ կոնկրետ քայլեր ենք անում, բայց շատերը պայքարում են օրէնքի գերակայութեան հաստատման դէմ, քանի որ շահագրգիռ են իրենց իշխանութեան վերաբերողութեան կամ յաճախ անօրինական ճանապարհով կուսակաճ հարստութեան պահպանման խնդիրներով: Եթէ

օրէնքի գերակայութիւն լինի, իշխանութիւն եւ փող ունեցող շատերը, որոնք մեծ յաջողութեամբ այն խախտում են, կը յայտնուեն բոլորովին այլ կարգավիճակում: Եւ այդ իսկ պատճառով նրանց համար խօսելը հեշտ է, լաւ է, իսկ գործ անելը՝ իրենց շահերի տեսանկիւնից՝ վնասակար: Երբ «Օրինաց երկիր» կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանը խիստ քննադատեց վարչի սեփականաշնորհումը եւ ներկայացրեց կոնկրետ հասցէներ եւ անձինք, դա հարուածեց շատերի շահերին ու գրպանին, ինչն առաջացրեց նրանց կոշտ հակադարձութիւնը: Անդրադառնանք ընտրութիւններին: Ի՞նչ կարող է անել ընդդիմութիւնը: Նախ եւ առաջ, բնականաբար, կարեւորագոյն խնդիր է այսօր, որպէսզի ընտրական յանձնաժողովներում ընդդիմադիր կուսակցութիւնների ներկայացուցիչները յստակ կանգնեն՝ պայքարելով ընտրակեղծիքների, խախտումների դէմ: Սա առաջին խնդիրն է, որը հնարաւոր է եւ պետք է արուի, որովհետեւ գրագէտ, պայքարելու պատրաստակամ ուղիսկ մէկ մարդը՝ քաղաքական ուժի ներկայացուցիչը, շատ մեծ գործ կարող է անել նախաժողովում: Իսկ այսօր յանձնաժողովներում կան ընդդիմադիր կուսակցութիւնների ներկայացուցիչներ: Երկրորդը. փոփոխութիւններ տեղի ունեցան «Ընտրական օրէնսդրութեամբ»: Իհարկէ, այն փոփոխութիւնները, որոնք նաեւ մենք էինք պահանջում, ամբողջութեամբ չիրականացուեցին: Բայց կատարուեցին որոշակի փոփոխութիւններ, որոնք հնարաւորութիւն են ընձեռում պայքարել ընտրակեղծիքների դէմ: Եւս մի շատ կարեւոր հանգամանք. դիտորդական առաքելութիւն իրականացնող տեղական եւ միջազգային կազմակերպութիւնների գործունէութիւնից շատ բան է կախուած լինելու յատկապէս այն ընտրատարածքներում, ուր աւանդաբար ընտրակեղծիքներ են տեղի ունեցել: Յաւօք, սոցիալական վիճակից, այլ խնդիրներից ելնելով՝ ոմանք ընտրակաշառք են վերցնում: Սա երկու վտանգ է իր մէջ պարունակում: Պէտք է մոռանալ, որ այդ կաշառք ստուղը փորձելու է այդ գումարը տասնապատիկ վերադարձնել իրեն: Բացի այդ, իմ խորին համոզմամբ, մի քանի միլիոն տոլար ընտրակաշառք բաժանելով

(Հայաստանը փոքր երկիր է)՝ կարող են լուրջ ազդեցութիւն գործել երկրի ճակատագրի վրայ: Սա նաեւ ազգային անվտանգութեան խնդիր է, եւ հարկաւոր է դրա դէմ շատ լրջօրէն պայքարել: ՕԵԿ-ն առաջարկել է քրէական օրէնսդրութեամբ խտտացումներ կատարել՝ ուղղուած ընտրակաշառքների դէմ: Յաջողութեան հասնելու միակ ճանապարհը քաղաքական դաշտում անընդհատական պայքարի ճանապարհն է: Ինչ վերաբերում է Գալուստ Սահակեանի ասածին, ապա ո՞չ որեւէ քաղաքական գործիչ, ո՞չ որեւէ քաղաքական ուժ ոչ մի իրաւունք չունի փորձել կանխորոշել ընտրութիւնները եւ չի էլ կարող:

-Ըստ որոշ ընդդիմադիր քաղաքական գործիչների, բոլոր ընդդիմադիր կուսակցութիւնների առաջնորդները պետք է իրենց թեկնածութիւններն առաջադրեն մեծամասնական ընտրատարածքներից որեւէ մէկում, եւ բոլորը միասին պետք է պայքարեն տուեալ թեկնածուի համար: Դա ընդունելի, հնարաւոր համարո՞ւմ էր:

-Մենք նաեւ նախկինում խօսել ենք այդ մասին: Դա աշխատող, նորմալ գաղափար է, եւ, այո, եթէ այս տարբերակով նոյնպէս լինում է համախմբում, դա դրական եւ ճիշդ է, որովհետեւ հասարակութիւնը մեծամասնական թեկնածուների առաջադրման ընթացքում տեսնում է ընդհանրական մօտեցում: Յաճախ մարդիկ բողոքում են, որ ընդդիմադիրները չեն միաւորուում, եւ այս միաւորման գաղափարը, դրան ձգտումը կարեւոր դեր է խաղում: Միաժամանակ, իհարկէ, նախագահական եւ պատգամաւորական ընտրութիւնները լրիւ տարբեր են:

-Հիմնականում ՕԵԿ-ն է պայքարում ժողովրդի աւանդները վերադարձնելու համար: Կառավարութիւնը նորմալ հաշուետուութիւն չի կազմել, թուերը միմեանց չեն համապատասխանում, եւ ես առաջարկում եմ, որ ձեր կառոյցներում համապատասխան մարդիկ իրական հաշուառում անեն, թէ ով որքան գումար ունի: Ես դիմումի ձեւ եմ մշակել, որը կը բաժանուի մարդկանց, նրանք դա կը լրացնեն ու կը ներկայացնեն ձեր կառոյցներին. ժողովուրդը ձեզ վստահում է:

-Դուք ճիշդ էք նկատել, որ ՕԵԿ-ը եւ կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանը ի սկզբանէ հետեւողականօրէն պայքարել են աւանդների վերադարձման համար, եւ ինչպէս ասես չպիտակաւորեցին մեզ, բայց կուսակցութիւնը, ի վերջոյ, հասաւ նրան, որ ԱԺ-ն

որոշում ընդունեց սկսել աւանդների վերադարձի գործընթացը: Բայց շատ անյաջող, ես կ'ասէի՝ բաւականաչափ խախտուակ հաշուարկներ են կատարել, բիւրոկրատական քաշքուքներ են առաջացնում: Մենք հետեւողական ենք լինելու աւանդները վերադարձնելու հարցում, եւ որքան շատ քուէ ստանայ ՕԵԿ-ը, այնքան աւելի մեծ է աւանդների լիակատար եւ արդար վերադարձի հաւանականութիւնը:

-Որոշ քաղաքական ուժեր համդէս են գալիս որպէս ընդդիմութիւն եւ առաջարկում են չմասնակցել ընտրութիւններին (որովհետեւ, միեւնոյն է, կեղծելու են դրանց արդիւնքները) եւ ընտրութիւններից յետոյ սկսել յեղափոխութիւն:

-Ընտրութիւնը քաղաքական պայքարի քաղաքակիրթ ձեւ է: Մենք բազմիցս ասել ենք այն մասին, որ Հայաստանի համար անհրաժեշտ ճանապարհը ժողովրդավարութեան առաջընթաց գարգացման եւ քաղաքական համակարգի էվոլյուցիայի ճանապարհն է, բայց եթէ այս ընտրութիւնն էլ անցաւ մեծ խախտումներով, ապա դա կարող է բերել լրջագոյն քաղաքական բախումներ: Այսօր արդէն կուսակցութիւնների համար անհաւասար պայմաններ են ստեղծուում ՁՄ-ներում. հեռուստատեսութիւնը, ըստ էութեան, ՕԵԿ-ի առաջ փակ է, եւ մասնաւորապէս կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանը 9 ամիս եթեր չի ունեցել:

-«Հակակրիմիալ»-ում «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահը հարց էր բարձրացնում ՕԵԿ-ին եւ ԳԿ-ին շարժումից հեռացնելու մասին, այնուհետեւ կասկածելի միջամտութիւն կատարեց ՍԻՄ-ի ներկուսակցական գործերի մէջ: Արդեօք դա նոյն պատմութիւնը չէ՞, երբ ժամանակ առ ժամանակ ընդդիմադիր միաւորումներում ակամապատում է կատարում:

-ՕԵԿ-ը մասնակցել է «Հակակրիմիալ»-ին, որոշակի վերապահումներով փաստաթուղթ է ստորագրել, բայց մենք այն դիտարկում ենք ոչ թէ որպէս կազմակերպութիւն, այլ կրիմիալի դէմ քաղաքական քննարկման ամբիոն եւ մասնակցում ենք այն դէպքում, երբ զուշացում ենք նախօրոք եւ նպատակայարմար ենք համարում: Մենք աշխատում ենք մեր մօտեցումներով, իսկ թէ ով ինչ գնահատական կը տայ, դա իր գործն է: Մենք ոչ մեկի գնահատականի կարիքը չունենք:

ՌՈՒՍԼԱՆ ԹԱՅՈՅԵԱՆ
«ԻՐԱՒՈՒՆՔ»

Հ.Կ.Բ.Մ.-ի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէնի Սանուց Միութեան Կազմակերպութեամբ՝

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Ի Պատիւ՝

Միացեալ Հայկական Ֆոնոի Նախագահ՝
ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ



Տեղի կ'ունենայ Կիրակի 21 Յունուար 2007
Երեկոյեան ժամը 7:30-ին
Santorini ֆաշարանի Rococo Room-ին մէջ
70 W. Union . Old Town Pasadena

ԹԵՐԱՆԻ ԱՐԱՔՍ ԹԵՐԹԸ

Ծ.Ն. Ուրախութեամբ կը տեղեկանանք որ 20 տարի է ի վեր Թեհրան հրատարակուող «Արաքս» ֆադախական, հասարակական ամսաթերթը, 2006 թ. Նոյեմբերէն սկսեալ լոյս կը տեսնէ որպէս շաբաթաթերթ, ուրը մեծադիր էջերէ բաղկացած:

«Արաքս» իր էջերուն մէջ կ'արտացոլէ իրանահայ գաղութի առօրեան, ազգային իմնական մարմիններու ներմիտ կեցուածքը եւ իրանահայ համայնքի անհատներու դժգոհանքը, ի տես այդ երեւոյթներուն: Յաջողութիւն եւ յարատեւութիւն կը մաղթենք «Արաքս» շաբաթաթերթին: Ստորեւ կու տանք ֆանի մը գրութիւններ «Արաքս» ի վերջին թիւերէն առնուած:

«ՅՈ՞ ԵՐԹԱՍ», ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՆ

Իրանի իսլամական խորհրդարանը (ԻԻԽ), 2005 թ. Մարտի 9ին, դռնբաց իր նիստի ընթացքում որոշում ընդունեց պետական-ձէից 17 միլիարդ 500 միլիոն ռիալ (մօտ երկու միլիոն տոլար) յատկացնել սահմանադրութեամբ ճանաչուած կրօնական փոքրամասնութիւններին մշակութային, մարզական եւ մամուլի գործունէութեան զարգացմանը:

Վերոյիշեալ գումարից թե՛ րանահայութեանը բաժին ընկաւ չորս միլիարդ 700 միլիոն ռիալ, (գրեթէ նոյն չափ էլ բաժին է ընկել Սպահանի եւ հարաւային իրանահայութեան), որը լրիւօրէն փոխանցուեց ԻԻԽ Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Պրն. Գէորգ Վարդանին, իսկ վերջինս մոռանալով իր հանգամանքը՝ որպէս համայնքի պատգամաւոր, յայտնուեց կուսակցականի դերում եւ սուսիկ-փուսիկ, ժողովրդի աչքից թաքուն, ստացած գումարը բաժանեց իւրայինների միջեւ՝

3 միլիարդ ռիալ Կրթական Խորհրդին,

500 միլիոն ռիալ «Ալիք» օրաթերթին,

200 միլիոն ռիալ «Պայման» եռամսագրին,

200 միլիոն ռիալ «Հանդէս» եռամսագրին,

200 միլիոն ռիալ Կարիքաւորներին օժանդակող մարմինին,

200 միլիոն ռիալ էլ իր գրասենեակի ծախսերի համար:

Հարց է առաջանում թէ՛ ի՞նչ տրամաբանութեամբ է Գէորգ Վարդանը առաջնորդարանի պիւտձէին օգտուող ՀՅԴ պաշտօնաթերթ, տպարանատէր, «Ալիք» օրաթերթին, ինչպէս նաեւ «Պայման» ու «Հանդէս» եռամսեալ թերթերին առատաձեռնօրէն բաժին յատկացնում պետական նպաստից, իսկ նոյն ժամանակ անտեսութեան ենթարկում քսանամեայ «Արաքս» շաբաթաթերթին, որ մեծ գոհողութիւնների շնորհիւ ցայժմ պահպանել է ի գոյութիւնը:

Ի հարկէ, այստեղ, մենք ոչ միայն մեղադրում ենք Գէորգ Վարդանին ու նրա կուսակցական մոլուցքը, այլ նաեւ պետական կողմին:

իրենց նախնիների բնակութեան վրաններ: Եօղունօլուզ գիւղի Եթաղամասի բնակիչների ցուցակից տողերիս հեղինակը բարձրաձայն ընթերցում է՝ Պօղոս Լազիսեան, իր Պօղոս պապի վրանն է գաւակների հետ: Նա, նրա թոռ՝ Պօղոս Լազիսեանն է, Պօղոս պապն է յարութիւն առել իր մէջ, իր թոռների ու նրանց գաւակների մէջ:

Հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ պատուում էին հարա-

Մուսալեռցի Արժանապատիւ հայրեր՝ Տ. Նարեկ Ա. Քհնյ. Շրիգեանը եւ Տ. Խորէն Ա. Քհնյ. Հապէշեանը: Օրուան հանդիսավար՝ Մուսա Լեռ Միութեան քարտուղար Պրն. Սեւակ Քէնտրիճեանը, ներկաներին բարի գալուստի խօսքից յետոյ, բեմ է հրաւիրում Միութեան նախագահի՝ Պրն. Հրաչ Գատեանին: Նա, սրտայոյզ երախտիքի խօսք յայտնելով ՀԲԸՄ-ին, Մուսա Լեռան ժողովուրդին ցուցաբերած օժանդակութեան համար, բեմ հրաւիրեց օրուայ բանախօս՝ Մուսա Լեռցի, Նորթրիճ Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւնների Մրազրի վարիչ-դասախօս՝ պատմութեան դոկտոր Վահրամ Շէմմասեանին, որը ստորեւ հակիրճ անդրադարձ կատարեց Մուսա Լեռան պատմութեանը, ՀԲԸՄ-ի դերակատարութեանը Մուսա Լեռում եւ նրա մշակութային գործունէութեանը Եգիպտոսի քառամեայ (1915-1919 զաղթականութեան ժամանակ:

հետեւորդներ էին ունեցել միսիոնարները:

Մուսալեռցիները զբաղուած էին եղել հողագործութեամբ, միեւնոյն ժամանակ արհեստներով, ինչպէս՝ սանտրագործութեամբ, շերամապահութեամբ, ջուլհակութեամբ:

ՀԲԸՄ-ը 1911-1914 թուականներին խորացրեց եւ Քէպուսիէ գիւղերում հիմնադրել էր դպրոցներ, որտեղ երկուական ուսուցիչների դասաւանդումով ուսանել էին մինչեւ 52 եւ 70 աշակերտներ, յաջորդաբար, տարեկան 24 եւ 30 Լիրա դրամական նպաստ յատկացնելով:

1915 թ. Յուլիսի 30ին, Անտիոքի Կուսակալը ազդարարութիւն էր ուղարկած եղել Մուսա Լեռ՝ եօթ օրերի ընթացքում պատրաստ լինելու տարագրութեան: Պատուելի Տիգրան Անդրէասեանի խորհուրդով գիւղերի աւազանին, բայց Քէպուսիէ գիւղից, ժողով էր գումարել եւ որոշել լեռ բարձրանալ դիմադրական կուիւններ մղելու: Օգոստոսի առաջին օրերին վեց ժամ տեւող առաջին յաղթական մարտն էր տեղի ունեցել Լէշիէ գիւղաքաղաքի միւսիւր՝ Նախիտի առաջնորդած թրքական զինուորների ջոկատի դէմ: Կարճ դադարից յետոյ երկրորդ յաղթական ընդհարումն էր տեղի ունեցել թրքական բանակի կանոնաւոր զինուորների հետ: Այնուհետեւ կատաղի կուիւններ էին բորբոքուել բանակային գործիքի եւ արաբ ու քուրդ աւարառուների հետ, որոնց ընթացքում պարտուած թշնամուց գրաւել էին գէնք ու զինամթերք: Առժամեայ դադարից յետոյ դարձեալ բուռն ճակատամարտ էր տեղի ունեցել թրքական բազմաթիւ կանոնաւոր զօրքի ու աշխարհահարաչինների դէմ, որոնք նահանջել էին եւ այլեւս չէին համարձակել նոր յարձակումներ ձեռնարկելու:

Շաբ.ը էջ 17



Ձախէն աջ Արժ. Տ. Խորէն Ա. Քհնյ., Տ. Կորիւն Ա. Քհնյ., Վահէ Խմաստունեան, Հրաչ Գատեան եւ Վահրամ Շէմմասեան


խարհի Սասունում, Վասպուրականում եւ այլ վայրերում Օսման կարմիր սուլթանի հրոսակները սպանել էին հարիւր հազարաւոր հայերի, կործանել բազում շէներ, քանդել տնտեսական կառուցներ, աւերել լոյսի ու հաւատքի տներ: Միութիւնը փութաց օգնութեան, վերականգնեց քանդուած կառուցներ, դպրոցներ, օժանդակեց կարիքաւորներին: Միութիւնը՝ ազգին սատար կազմելու իր առաքելութիւնը ծաւալեց հայկական գաղթօճախներում, որտեղ կարիքը կար նպաստելու վերաշինութեան, դպրոցաշինութեան, բարեխնամութեան: Միութիւնը հասաւ նաեւ իմ հայրենի Մուսա Լեռ, այնտեղ հիմնադրելով դպրոցներ:

Լային Քալիֆորնիոյ ՀԲԸՄ-ի մասնաճիւղի ատենապետ՝ Պարոն Վահէ Խմաստունեանը, ՌԱԿԻ եւ Բարեգործականի ականաւոր դէմքերից՝ Պրն. Փանոս Թիթիգեանը, «Նոր Կեանք» շաբաթաթերթի երկարամեայ տաղանդաշատ իմբազդի ու գրող Պրն. Գրիգոր Շէնեանը եւ բնիկ


Դեկտեմբերի 16ի երեկոյեան ժամը 7:30ին Կլէնտէյլի կեդրոնական գրադարանի հանդէսների դահլիճը լեցուն էր մուսալեռցիներով, որոնք եկել էին իրենց երախտիքի սուրբը մատուցելու ՀԲԸՄ-ի հիմնադրման հարիւրամեակին: Իրենց աշխարհի հովիկների ժպիտն էր շողում նրանց դէմքերից, խումբ, խումբ իրար մօտիկ կանգնած, իրենց հայ բարբառի խօսքով հարցնում ով որ գիւղից էր, իրենց աշխարհից էին պատմում, կարծես երէկ էին այնտեղից ժամանել: Աւանդապահ է մուսալեռցին, թէկուզ ոչ երկրի ծնունդ, իրեն Մուսա Լեռցի է անուանում:

Դահլիճի ձախ կողմի պատի կանգնածներին լուսանկարներ, վաւերաթղթեր էին: Փրկարար ռազմաւաւերն են խարսխել Մուսա Լեռան ափերին, կամաւոր լեզնոսականների լուսանկարներն են, որոնց դէմքերից յաղթական ճակատամարտերի պարծանքն է ցոլանում: Իրար կողքի երկու լեզնոսական կամաւորների զինուորական ծառայութեան վկայականներն են՝ Յակոբ Հերկէլեան ու Արմենակ Լազիսեան: Փորթ Սայիտ նաւահանգիստի Լազարէթի աւանի վրանաքաղաքի յատակագիծն է: Խմբուել են նրա առաջ փնտուելու

The Glendale Police Department is Looking for Bilingual Armenian/English Police Officers



Salary: \$5,178 to \$6,764/per month



The Police Department prides itself on providing the best police service to the citizens of Glendale.

We are looking for dynamic individuals who are interested in serving their community and continuing the excellence of the Glendale Police Department.

The next written test date is March 13, 2007
Applications are due by February 16, 2007

Police officers with other agencies are always encouraged to apply to join the Glendale Police Department.

For more information, please contact us:
Glendale Police Department – Recruitment Unit
131 North Isabel St. Glendale, CA 91206

Phone: (818) 548-3117
Email: gpdrecruiting@ci.glendale.ca.us Website: www.joinGPD.com

ԳԻՐԵՐՈՒ ՇԵՏ

«ՄԱՐԶԱՇԽԱՐԿԻ ԱՆՈՒԱՆԻ ՐԱՅԵՐԸ»

Լուս Աճճելուսի մէջ լոյս տեսնող KOHTAKT ռուսատար շաբաթաթերթի 2006 թ. Դեկտեմբերի 8-14, թիւ 757 համարում տպագրուած է Յովհաննէս Կոչկակարեանի յօդուածը նուիրուած Աւետիս Բայրամեանի «Մարգաշխարհի Անուանի Դայերը» գրքին: Այն թարգմանաւար կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

Յունաստանի Օլիմպիա թանգարանում է գտնուում այդ խաղերի յաղթողների մարմարէ վիմադիր արձանագրութիւնների սալիկները, որտեղ նշուած անունների շարքն աւարտուում է Հայոց Վարդազատ Արշակունի թագաւորի անունով, որն իր հաւասարը չունեցաւ մարգական ձեւում, որն իր մէջ ներառուում էր ժամանակակից բռնցքամարտի եւ ըմբշամարտի տարրեր:

Վարդազատ թագաւորը մասնակցել էր վերջին 291րդ Օլիմպիական խաղերին, որը տեղի էր ունեցել 385 թուականին:

Մարգական խաղերն ու մենամարտերը Հայաստանում մեծ տարածում են ունեցել, որի մասին լայն վկայութիւններ են տալիս Երեւանի Մատենադարանում պահուող հնագոյն ձեռագրերը: Այդ ձեռագիր գրքերը վկայում են այն մասին, որ Հայաստանում դեռեւս հին ժամանակները հանրամատչելի էին նոյն պարու թիւնը, բռնցքախաղը (կոփամարտը), ըմբշամարտը, սուսերամարտը, նետաձգութիւնը, ծանրամարտը, դահուկասահքը, սառցապարը, լողը, ջրասուզումը, վազքը, թռիչքները սկաւառակի նետումը, ճատրակը, նարտին, բժշկական մարմնամարզութիւնը եւ այլ մարզաձեւերը:

Հայաստանում անց էին կացուում Նաւասարդեան խաղեր, որոնք նմանատիպ էին Օլիմպիական խաղերին:

Ժ. Դարի վերջին փէէո Տը կուրերտենի նախաձեռնութեամբ վերսկսուեցին Օլիմպիական խաղերը եւ 1896 թուականին Աթէնքում կայացան առաջին ժամանակակից Օլիմպիական խաղերին:

1912 թուականի 5րդ Օլիմպիական խաղերին, որը կայացաւ Սթոքհոլմում, մասնակցեցին պուսասհայ թեթեւ ակթետներ Վահրամ Փափագեանը եւ Մկրտիչ Մկրտչեանը: Ժամանակակից Օլիմպիականներում, հայերից առաջինը մրցանակակիր դարձաւ Հայկ Քէշիշեան-Երիսթը (ԱՄՆից, ջրացատկ): 1920 թուականին Անտոյեթայնի 7րդ Օլիմպիականում նա արժանացաւ պրոնզէ մետալի:

Ի միջի այլոց Հայկ Քէշիշեան-Փրիսթը յայտնի է նրանով, որ խաղերի ժամանակ, գիշերը ողիմպիական աւան վերադառնալիս, տեսել է ողիմպիական դրօշը, մագլցելով ձողով «գողացել է» այն որպէս յուշանուէր, յետագայում 2000 թուականին վերադարձնելով Միջազգային Օլիմպիական կոմիտէին:

Հայաստանի մարզիկներից Օլիմպիականների առաջին ախոյեան է դարձել Հրանդ Շահինեանը, 1952 թուականին Հելսինքիում կայացած 15րդ Օլիմպիականում նա նուաճել է երկուական ոսկէ եւ արծաթէ մետալներ: 1956 թուականին Մելբուռնում կայացած 16րդ Օլիմպիականում Հայաստանի մարզիկները նուաճեցին 4 ոսկէ մետալ: Շահած ոսկէ մետալների քանակով Հայաստանը Օլիմպիական մասնակցած ԽՍՀՄ-ի 15 հանրապետութիւնների մէջ զբաղեց 3րդ տեղը, զիջելով միայն Ռուսաստանի դաշնութեանը ու Ուքրանիային:

Ընդ որում Հայաստանի մար-

զիկները վաստակած միաւորների քանակով գերազանցում էին Պրագիլիայի, Արժանթինի, Հարաւսլաւիայի, Նոր Զելանտայի, Պելճիքայի, Նորվեգիայի, Աւստրիայի եւ այլ երկրների մարզիկներին:

1992 թուականի Պարսելունիայի 21րդ Օլիմպիականում ԱՊՀ-ի հաւաքականի կազմում ընդգրկուած հինգ հայաստանցի մարզիկներից 3-ը դարձան Օլիմպիական խաղերի խաղիկներ, իսկ մէկը՝ արծաթէ մետալակիր:

Ժամանակակից Օլիմպիականներում, հայ մարզիկները, անհատական եւ խմբակային մարզաձեւերում վաստակել են, 34 ոսկէ եւ 24-ական արծաթէ եւ պրոնզէ մետալներ: Ընդ որում ամէնից յաճախ աչքին են ընկել ծանրորդները: Օլիմպիական ախոյեաններ են դարձել Ռաֆայէլ Չմշկեանը (1952 թ. Հելսինքիում), Նորայր Նուրիկեանը (1972 թ. Միւնխենում, 1976 թ. Մոնթրէալում) Եուրի Վարդանեանը (1980 թ. Մոսկուայում) Օգսէն Միրզոյեանը (1988 թ. Սէուլում), Իսրայէլ Միլիտոսեանը (1992 թ. Պարսելունայում):

Ըմբշամարտիկ Արմէն Նազարեանը 1996 թ. Աթլանթիկում դարձաւ Օլիմպիական ախոյեան: Նա առաջին մարզիկն էր, Օլիմպիականի կայացման ամբողջ ընթացքում, որի պատուին բարձրացուեց Հայաստանի եռագոյնը եւ կատարուեց մեր օրհներգը:

Օլիմպիական ախոյեաններ են դարձել նաեւ Ռուսաստանի ներկայացուցիչներ Սուրէն Նալպանտեանը (1970 թ. Մոնթրէալ), Մանասար Յովհաննիսեանը (1980 թ. Մոսկուա), Վարդերես Սամուրզազեանը (2000 թ. Սիտնի), հայաստանցիներ Լեւոն Զուլֆալյակեանը (1988 թ. Սէուլ), Մնացական Իսկանդարեանը (1992 թ. Պարսելունայ), 2000 թ. Արմէն Նազարեանը Սիտնիում (ներկայանում էր Պուլկարիան), առաջինը հայ ըմբշներից դարձաւ կրկնակի ողիմպիական ախոյեան:

Տարբեր Օլիմպիականներում, ողիմպիական ախոյեաններ էին դարձել ֆութպոլիստ Նիկիտա Սիմոնեանը, մարմնամարզիկներ Ալբերտ Ազարեանը (եռակի ախոյեան) եւ նրա որդին էդուարտը, հրաձիգ Հրաչեա Պետրիկեանը, պասթեթպոլիստուհի Ելենա Բունկաթեանցը, բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարեանը, սուսերամարտիկներ Գէորգի Պողոսովը եւ Կարինէ Ազնաւուրեանը, թենիսիստ Անդրէ Ադային, ձեռքի գնդակորդ Պաւել Սուքիասեանը, հոքէյեաններ Գրիգոր Մկրտչեանը եւ Վիքի Մովսիսեանը: Հայաստանի հաւաքականի կազմում Օլիմպիական ախոյեաններ են դարձել հնգամարտիկ Իգոր Նովիկովը եւ սկաւառականետորդ Ֆաինա Մելնիկը:

Բացի Օլիմպիական խաղերից, հայ մարզիկներն աչքի են ընկել աշխարհի եւ այլ միջազգային մրցումներում:

Այսպէս, խորհրդային առաջին մարզիկներից մէկը, որ սահմանեց համաշխարհային մրցանիշ, դարձաւ ծանրորդ Սերգո Համբարձումեանը:

Շաբ.ը էջ 17

ՇՈՒԷՏԻԱՅԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԵՐԿԻՐ»

ն.

Թեհրանում պարսկերէն լեզուով լոյս է տեսել Փրոֆէսոր Օհան Վարդանեանի յուշագրական հատորը, 126 մեծադիր էջերից բաղկացած: Հատորի մէջ ամփոփուած են վաղամեռիկ բժշկ փրոֆէսորի յուշագրութիւնները եւ այն բոլոր աշխատանքները որոնք կատարել է նա հեռաւոր Շուէտիայից մինչեւ Հայաստան, մասնաւորապէս 1988 թուականի աղիտալի երկրաշարժից յետոյ: Հայրենասէր եւ երախտագէտ բժիշկը, որն ժամանակին իր ուսումն ստացել է մայր հայրենիքում, հայ ժողովրդին օգնելու համար, մի խումբ շուէտացի բժիշկների հետ մեծ քանակութեամբ դեղորայք եւ բժշկական սարքաւորումներ իր հետ առնելով մեկնում է աղէտի վայրը եւ մեծ օգնութիւններ ցուցաբերում վիրաւորներին: Այդ այցելութիւնը շարունակուում են եւ փրոֆէսոր Օհանեանը շրջում է ամբողջ երկիրը, այցելում է Ղարաբաղ եւ համուած ժողովրդի ցաւերին: Գրքում կան բազմաթիւ վկայութիւններ եւ անհրաժեշտ նկարներ, որոնք առնչուում են փրոֆէսորի եւ մարդասէր շուէտացի բժիշկ ընկերների աշխատանքներին:

Յուշագրական այս արժէքաւոր հատորը լոյս է տեսել շուէտերէն: Հեղինակի վաղաժամ մահից յետոյ (Փետրուար 1, 2005 թ.) թարգմանուել եւ հրատարակուել է նրա եղբօր, բանաստեղծ Փանոս Վարդանեանի միջոցով: Գրքի մէջ



լայն ծանօթութիւններ է տրուած Շուէտի նորակազմ հայ գաղութի, դրանց թւում «Արարատ» Միութեան մասին: Բազմաթիւ արժէքաւոր նկարներ կան գրքում, Հայաստանի եւ Արցախի հիւանդանոցների, աղէտի վայրերի եւ պատասխանատու հայ եւ շուէտացի անձանց առնչուող: «Շուէտիայից մինչեւ Արարատեան Երկիր» պատմական հատորի հեղինակ փրոֆ. Օհան Վարդանեանի մահուան առթիւ, որն տեղի է ունեցել Շուէտի մէջ, անդրադարձել ենք ժամանակին «Մասիս»-ի մէջ եւ մեր ցաւակցութիւնները յայտնած թերթիս աշխատակից բանաստեղծ Փանոս Վարդանեանին:

Շնորհաւորում եմ բոլոր «Մասիս»ցիների նոր Տարին մաղթելով ու ակնկալելով նորանոր յաջողութիւններ

ՄԱՆՈՒԷԼ ԿԷՋԱԼԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՌ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԷԻՈՐԳ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ ԱՆԹԱՊԼԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՌ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՎԱՀԱՆ ԵՒ ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾԵ

ՏԻԿԻՆ ՍԱՐՍԱՓԵԼԻՆ

ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ

Նա բոլորի ժամանակակիցն է: Նրան ճանաչում են ամենուրեք: Նա վարում է անթաքուց կենսակերպ: Ձի էլ մտածում Գողթաթի նման ապրելու մասին: Կայ ու վերջ: Նա յայտնուելիք է բոլոր տեսակաշատում: Պարտք ու պահանջի հետ գործ չունի: Նրանց նորին գեղեկացու-թիւն բամբասանքն է, որը նա գլորում է բերանից բերան, ականջից ականջ: Նա ոչ ծեր է, ոչ երիտասարդ: Կայուն տարիք չունի, եթէ աչքերը բան-ման չասեն դիմացինին: Նա ամենահայն է, որ բնակ-ւում է երկրորդ եսի տարածքում: Նա ոչ սուրբ է, ոչ պոռնիկ: Նրա կուսակցութիւնը Ոսկէ Միջինն է: Աւելին, նա տառապում է միայն բազմադեմութեամբ, ուստի եւ ան-ճանաչելի է մնում յաճախ, բայց չի դադարում գոյատևելուց: Նրա փաս-տաթղթերով ամբարդուած կողակի-ցը, որ Տիար Սարսափելին էր, չկայ, ոչ եւս է արդէն մի ողջ հազարամ-եակ, եւ դեռ աւելի:

Զարմանալի բան չկայ: Զար-մացնողը հայ չի լինում, այլ ազգու-թեան ու կրօնի բեռնակիր է մնում եւ այնքան ժամանակ, մինչեւ բացա-յայտուի: Հիմա բոլորն են հայ: Ասորին էլ է հայ, եզդին էլ, յոյնն էլ, հրեան էլ, քրիստոնէս էլ, շուքերն էլ, փրենկիկացին էլ, դանդաղուն էլ... Կարեւորը Տիկին Սարսափելին է, որ բարոյականութեան եւ անբարոյա-կանութեան, գիտութեան ուր տգի-տութեան մերանը խառնաշփոթ, մե-րօրեայ շերտին է ու շերտիկը միաժամանակ: Փեսաները նրան կը շփոթեն գոքանչների հետ: Հարսնե-րը՝ սկեսուրներին: Ինչու է, նաեւ տալերի: Որովհետեւ նա ոչ սիրուն է, ոչ սգեղ: Հա, սրբի սէր չի փնտրում, աւելորդ կարեկցանքի ժա-մանակ չունի: Ուրազը ձեզ օրինակ: Գերադասում է հիւր գնալ ու չվե-րադառնալ, մինչեւ վունտեն, ետեւից էլ գրող չասեն:

- Աղջի, հողեմ դրա գլուխը, գալիս ա ու չի գնում, - պոռթկաց Եղջերու Երանուհին՝ սուրճը դնելով կլորիկ սեղանիկին, - ականջն էլ միշտ փափսոցի կողմն ա կախում, որ խաբար հաւաքի:

- Իսկականից, Երան ջան, - ակամայ միջամտեց նաւթի Նունու-ֆարը, - թաղեմ դրա բոլը, մի էրքան էլ գետնի տակն ա: Ըդրա ինդալ-մնդալուն չաչես, թալա ա, բունեց նէ, բաց չի թողնի: Էնքան կը քաշքշի օր մուխը մարուի:

- Խմի, խմի, մի գոլխրի, դու էլ պակասը չես:

- Իյա, Յիսուս Քրիստոսի, աղ-ջի, իմ ինչն ա՞րտենց արտառոցով, - չվնասեց Նունուֆարը, բայց տակն առաւ, ըդրա փեշի տակին տասը տղամարդ կը պախկուի...

- Խնդա՞մ, թէ՞ լամ, - կծեց Երանը:

- Որը կ'ուզես, բերանիդ տէրը դու ես:

- Խի՞, քու բերանը, որ ուես ա, տէր չունի՞:

- Աղջի, երան, սուրճս հարամ չանես, հիւրասիրել ես, բարի եղի՛ր՝ չպղտորես թէ՛ չէ՛ Տիկին Սասափելուն որ հասաւ ցնցող լուրը, հոգիդ բերանդ կը սայ: Չես կարայ ճողոպ-րած ըլնես:

- Իյա՞

- Հա, Նունուֆարս հացը խելքի հետ չի ուտա, գրոց կ'ըլնի օր վերջերը չփոշմանայ: Դու մասնե-րուդ արանքովը քիչ նայա ինծի: Ես վնդուռ Վերգինէն չեմ, աղջի, նաւթ եմ, նաւթ, ըչպիշկեղ հեռու պախա,

կը վառեմ ու չեմ թողնի հանգչիս:

- Պա հօ... աչքիս ոնց որ Նունուֆարը չեղնիս: - ծոր տուեց Երանը, - բարութ կերածի մէկն ես, աղջի, ուրեմն՝ լաւ լայ, ես էլ եղջերուն եմ, կոտոշներս կը խրեմ ամէն տեղը ու ախ չեմ ըսէ: Դու էլ ընծի քու արշինովդ ի չափէ, թէ չէ օր մը չէ օր մը բոլի սայթաքիս:

- Աղջի՞:

- Դու սուս:

- Ընչի՞, Երան ջան:

- Մեզի ականջ դնող կայ, Նունուֆար ջան: Չնեղանաս, քեզի էլի բոլի խայթեմ: Թող իմանան օր յանիմ մենք իրարու հետ թուր ու դանակ ենք, երթալ-գալ չունինք, խուով կը պահենք ու նոր տարուանն էլ չենք բարիչի:

- Տօ դէ, քիչ խօսայ, սիրամար-գի շորօ կ'ու տա՞ս... աղջի, քեզի լսողը մենակ ես եմ մնացել, սաղ փախան: Ես օր թուայ, դու քու շուքիդ հետը բոլի կուրիս: Հա՞: Դէ բլբլա, է, ցաւոտ վայրիդ կպաւ խոփա, հա՞:

- Այ աղջի, հըմը թէ լեզու ունիս օձը բնեն ու շալվարեն կը հանես:

- Իսկ դու, նախկին օրիորդի մէկը, օր կարմիր ինձոր դրկել տուիր, պրծա՞ր: Հաւատալս եկա՞ւ: Եփած հաւի աշակերտ, ո՞ւմ ես բուռ առել: Մէ հատ սուրճ տուիր, ջանս քու դանակով քերեցի: Էս ա՞ քու հարեւանութիւնը:

- Ամերիկաներումը էս էլ շատ ա: Քեզի օր մնայ, մեզի չի մնայ: Ուրտեղ ապրար, ըստեղի վարքն ու բարքը շալակիր, եկար:

- Դու էլ խառաշոյի տակն ես պառկել, հըմի ես ըսեմ՝ ուսասհա՞ւ:

- Խօսա, խօսա, երեւում ա էլի սուրճ բոլի եփեմ:

- Ղուրբանս էղնիս, թեւերդ թափուա՞ն, ընձի պէս խաս ընկերու-հի օր ունիս, երկու չէ, հազար բաժակ էլ եփես, սիրտս չես մտնի, մինչեւ ես թոյլ չտամ:

- Աղջի, Նունուշ, բախտավար, լեզուդ շատ հեռու գնաց, մի հատ էն բանին զանգի, էն ինչ էր անունը՞:

- Բաալբեկ Բաւականի՞ն:

- Չէ, աղջի, Թաջ Մահալ Թինային, համարը գիտե՞ս:

- Չէ սուր, օրը մէկի տանն ա ըլնում, ո՞ր համարով գանգեմ: Ի՞նչ ըսեմ:

- Հացուփորձ արա հարսից, տալից, հարեւաններից, յետոյ էլ առաջարկէ, թող դոշակի տակը գետեղած փողն առնի ու գայ:

- Հըմի՞:

- Չէ, վաղը թող հետներս քազինօ գայ:

- Օր քցե՞սք:

- Էնիդ քցուղ պտուղը չէ, դու քեզի աչէ:

- Հա, կը մեռնի ու մէ չոփմ մէկին չի տայ ձրիաբար, դու ճիշտ ես: Երազ եմ տեսել, էն ինչ երազ էր, իսկը երազանք: Ծուտ արա, դէ, գանգէ, ի՞նչ ես պիտակ թքոտում: Որ թքոտես էլ, ո՞ւր բոլի կպցնես:

- Ուղիղ բերնիդ, Երան ջան:

- Տօ, հըլը սպասէ:

- Աղջի, խուտուտ ունիմ, թող, ուշքս կ'անցնի:

- Աւելի լաւ, երէկ մեռնէիր, էսօր ինքնահողդ կ'անէինք, Նունու-ֆար ջան:

- Չէն մի հանէ, գանգում եմ, չէ՞: Ալօ... ո՞վ ա... մեր ազատամար-տիկ քուտրն ենք ուզում... հա... կը սպասեմ... ալօ, աղջի դարձուր, մենք օր չգանգենք, դու հէջ մարդ մատիդ չես տայ: Գրող ու ցաւ: Աչքերս սեւ ջուր իջաւ: Երանենց տնից կը խօսամ: Հա:

- Ասա, վաղն ինչ ա անելու:

- Վաղը գործ-մործ խօ չունի՞ս, Թինա ջան, չէ՞... լաւ ա: Ընչի՞, ես ու Երանը որոշել ենք քազինօ եր-թալ, դու կը հաճի՞ս, եաւրիկա: Այո՞: Ապրիս: Աղջի, կովի մէկը, էդ ո՞ւմ ես խոզի մուտթ անըմ, եօթա-նասունը շալակար, էլի խելքի չե-կա՞ր... սօ, շատ լաւ եմ էլընմ, քած, նեղանում ես, նեղացիր, մէկ ա վաղը բոլի լայնանաս: Հա, ջանիկս, քու արեւը, բոլի երթանք... քանիսի՞ն... ութն անց տասը, նոյն տեղից քեզի վերցնել կը տամ, բոյդ թաղեմ, հանաքի չես դիմանա, կեսրոջդ հրեցիր, գգեցիր թոնդիւրը, ազա-տութիւնը վրէժ առար, եկար ըստեղ օր հըմի ընկերութենէն խուսանա-ւե՞ս... չենք թողնի, հա: Ես ու Երանը քանի կանք, դու սուտ չես կրնայ խօսաս: Ծուտումը կը բռնուիս: Հասկ-ցա՞ր: Դէ, ջանիկս, պատրաստուիր վաղուան... ոչինչ, էսօր կարաս ապ-րես... լեզուդ շիշ բանի, էդ լեզուդ օր չեղնի, դառղաուները աչքերդ կը հանեն, քու արեւն էլ, քու լուսնեակն էլ... օֆ:

- Աղջի, դու իսկը քարտուղա-րուհի կըլնես, էդ ի՞նչ հունարով խօսար:

- Լաւ, լաւ, ջեքս մի առէ, քեզի էլ գիտենք, է՛հ, ես երթամ:

- Ո՞ւր:

- Գրողի ծոցը:

- Իյա, թաժա ես պսակուե՞լ, Նունուշ ջան: Կարմիր ինձորդ առ-նի՞մ:

- Չես կրնա, Երան-գերան ջան, իմա տանձ ա, բարի գիշեր:

- Դուրս բարի:

- Ինչ ըսի՞ր:

- Հէջ, ըսի՛ր լուս բարի:

- Հա, թէ չէ եսիմ: Բուրդդ կը դնեմ ու բամպակդ կը գգեմ, Երա-նուհի տիկին, ծպտուն չես կրնայ հանէ: Երկրորդ մարդուդ յանկար-ծակի մեռնելն էլ քեզի նուէր, օր չեմ բացայայտէ:

- Գնա, գնա, շահի սափրիչին առար, սապնի փրփուրն ընկար, գիտես, չաեսա՞նք:

- Ես առամ, քեզի ի՞նչ: Ընչի քու յետոյդ կը վառի: Աղջի, թող անվրդով տուն հասնիմ, թէ չէ կը մնամ ըստեղ ու դու չես կանայ տղամարդ բերաս: Խառը ժամանակ-ներից օգտուողիս աչէք, պոչը խու-գել, խառուեւ է քամիներին... աղ-ջի, եղջերուն եղնիկ չի դառնայ, կոտոշները կը խանգարեն:

- Ծատ մի հաչա, վաղը չուշա-նաս, գնայ:

- Ույ, բոյդ թաղեմ եօթը քարի տակ:

- Արեւը մեռնի, օր ցաւ չգգաս, չես դիմանայ, անտէր մարդու արեւն էլ ա անտէր: Անտէր լեզուդ կողպուի, ետեւ չնայես, մէ կտոր գնա: Օֆ...

Նրանք հեռացան երկու կուտա-գան գոմէշների պէս: Մէջտեղում մնաց հնձած խոտն ու այն որոճալու ախորժակը, որով մեզ՝ բոլորիս խաբում են արեւմուտքում, փափուկ բարձ թուացող, սակայն իրականու-թեան մէջ կոշտ ու կոպիտ, պարտ-քերով շղթայուած առօրեայի պա-տիժը կրելուն դատապարտուած: Անտրտունջ:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐՔ ԾՆՈՒՆԴ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԶՕՀՐԱՊ ԵՒ ԱՐՓԻՆԷ ԶՈԼԱՔԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐՔ ԾՆՈՒՆԴ



ԳՆԱԿԱՏԵԼՈՎ «ՄԱՍԻՍ»Ի ՆՈՐ ՏԱՐՈՒՅ ԲԱԳԱՌԻԿԸ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԵՐՈՒ ԵՒ ՄԱՐԻ ԳԱԼԹԱՔՃԵԱՆ ՊԱԹՈՒՆ ՐՈՒԺ

Աւանդական ուխտագնացութիւն Չինսուրայի Ս. Յովհաննէս հայկական եկեղեցի

Յունուարի 14-ին, Ս. Յովհաննէս Կարապետի ծննդեան սունին յաջորդող Կիրակի օրը, աւանդութեան համաձայն՝ ուխտի Ս. Պատարագ մատուցուեց Չինսուրայի Ս. Յովհաննէս հայկական եկեղեցում, որն Արեւմտեան Բեն-

թացքում Հայր Սուրբը յաւուր պատշաճի քարոզ խօսեց՝ հայցելով Ս. Յովհաննէս Մկրտչի բարեխօսութիւնը հնդկահայոց զաղութի համար:

«Այսօր պատմական օր է հնդկահայ զաղութի համար, քան-



զալիս նահանգի երկրորդ ամենահին քրիստոնէական եկեղեցին է եւ Մայրապոյն Արեւելքի առաջին հայկական եկեղեցին՝ կառուցուած՝ 1695թ.-ին:

Օրուայ պատարագին էր հնդկահայոց հոգեւոր հովիւ եւ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գիւլգիւլեանը, որին ընկերակցում էր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Տիգրան սրկ. Բաղդմեանը: Ս. Պատարագի ըն-

գի մեր նախնեաց օրինակով կրկին ուխտի ենք եկել Ս. Յովհաննէս հայկական եկեղեցին՝ աղօթելու եւ վերստին Տիրոջմով նորոգուելու համար: Ուստի եկէք միասնաբար աղօթենք եւ ուխտենք, որ ամէն ինչ պէտք է անենք՝ տէր կանգնելու համար հիւրընկալ այս հողի վրայ սփռուած մեր արժէքներին՝ ամէնուր ազդարարելով հայ քրիստոնէայի բարի անուան մասին», -նշեց Օշական վարդապետը:

Ուրախալի այս առիթով Կալ-



կաթայի Ս. Նազարէթ հայկական եկեղեցուց դուրս էր բերուել նաեւ Ս. Յովհաննէս Մկրտչի մատուցով Ս. Աջը, որով եւ Ս. Պատարագի ընթացքում կատարուեց անդաստան: Յաւարտ սրբազան արարողութեան բոլոր մասնակիցներն իրենց խոնարհումը բերեցին սրբի

մատուցներին՝ համբուրելով ատեանում դրուած Ս. Աւետարանն ու Ս. Աջը:

Ուխտագնացութեանը մասնակցում էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր եւ Մարդասիրական ճեմարանի սաները:

ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂՈՂ ԵՌԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00
Կլէնտոյլի 26-րդ կայանից



Wahib

Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN
LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL(626) 795-4493

ՄՈՒՍԱԼԵՈՑԻՆԵՐԻ ԵՐԱԽՏԻՔԻ ԵՐԵՎՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԸՔԸՄ-ԻՆ ԸԱՐԻՐ ԱՄԵԱԿԻՆ

Շարունակում է 13-էն

Մուսա Լեւոնի հարող ծովում պարեկութիւն անելու ժամանակ, Ֆրանսական Guichen հաճանաւից նկատել էին հանդիպակաց լեւոն վրայ ծածանող կարմիր խաչով սպիտակ դրոշակ եւ պատասխանել նրա ազդանշաններին: Այն մօտեցել էր ծովափ եւ ընդունել Մուսա Լեւոնի ներկայացուցչին: Հաճանաւի հրամանատար ժողով Պրիստինի յուզել էր նրանց կուռի մանրամասները եւ հեռագրել էր Jeanne d'Arc ռազմաւանաւ ծովակալ Տարթիօ Տիւ Ֆուրնէին, որը նոյն հաճանաւով ժամանել էր ծովափ: Մերժել էր նրանց խնդրանքը կուռը շարունակելու համար զինամթերք, պարեն տրամադրել: Առանց իր կառավարութեան նախնական թոյլտուութեան Սեպտեմբերի 12ին ծովակալը կարգադրել էր 838 ընտանիքների 4200 անձանց վերցնել հինգ ռազմանաւերի վրայ: Դեռեւս նաւի վրայ, չէին իմացել որտեղ գաղթեցնել նրանց՝ Կիպրոս, Թունիզ, Ալճիրիա, Աւստրիա, Կովկաս: Անգլիական ու Ֆրանսական կառավարութիւնների միջեւ եղած համաձայնութեամբ Սեպտեմբերի 14ից 16ը ժամանել էին Փորթ Սալիտ, Եգիպտոս: Ֆրանսական նաւատորմի ղեկավար օր խնամել էր նրանց հոգատարութիւնը: Գաղթականներին բնակեցրել էին Փորթ Սալիտի մօտիկ Լազարեթթա աւանում, չորս-հինգ քարէ շէնքերի շուրջ լարուած հինգ հարիւր վրաններում:

1916 թուականին, Փիքո-Սալքա-Նուպար Փաշա (Հ.Բ.Լ.Մ.-ի նախագահ) համաձայնութեամբ կազմաւորուել էր հայկական լեզոն, որի նախաձեռնողը ու կորիզը կազմել էին Մուսա Լեւոնի 600 կամաւորներ, որոնց թուում բազմաթիւ քննապիներ, միացել էին լեզոնին: Կիպրոսի Մօնարկա վայրում զինուորական պատրաստութիւն անցնելուց յետոյ գրոհել էին Պաղեստինի Արարայի (Նապլուս) գերման-թրքական ամրութիւնները, խորտակել այն, քայքայել նրանց ռազմաճակատը, ճանապարհ հարթել դաշնակից զորքերի դէպի հիւսիս նրանց արշաւանքին: Այնուհետեւ լեզոնը մասնակցել էր հայկական Կիլիկիայում ծաւալուած մարտերին եւ 1920-1921 թ. ֆրանսացիների կողմից ուխտադրութեան զօրացրուել:

Հայկական կարմիր խաչը Փորթ Սալիտի գաղթականում հիմնադրել էր հիւանդանոց, տրամադրել 120 Ստերիլիզի բժշկական պիտոյքներ, իսկ կառավարութիւնը գլխաւոր բժիշկ ու երեք օգնականներով անձնակազմ: Եգիպտոսի Հայկական կարմիր խաչի մասնաճիւղերը եւ համայն հայկական գաղութը օրինակելի ջանասիրութեամբ բազմապիսի օժանդակութիւն էին ցուցաբերել գաղթականներին:

Նրանց ապրուստը ապահովելու նպատակով Ամերիկեան կարմիր խաչի կազմակերպութիւնը գործարկել էր աշխատանոցներ, որտեղ պատրաստել էին սանտրեր, գործել գորգեր ու ցանցեր, կարել անկողնային սաւաններ, զինուորական շապիկներ, կատարել անհնազորական աշխատանքներ:

Հ.Բ.Լ.Մ.ը 1915 թուականի Հոկտեմբերի 15ին, քսան հինգ վրաններում հիմնադրել էր դպրոց՝ Սիսուս անունով (Սիս-Վան), որի բացման հանդէսը կատարուել էր նոյն ամսի 20ին: Սկզբնական շրջանում այնտեղ ուսանել էին 1250 աշակերտներ, յետագայում մինչեւ իսկ 2300: Կրթական Յանձնախումբ մը, Կանանց Օժանդակ Մարմին էր հիմնել,

երեխաներին նուիրելու համազգեստ, գլխարկ, պայուսակ, մի գոյգ կօշիկ ու գուլպաներ, թաշկինակ եւ մետաղեայ ջրի բաժակ: Հ.Բ.Լ.Մ.ը հրատարակել ու բաժանել էր Մայրենի Լեզու դասագիրքը:

Ուսումնական ծրագիրը բաղկացած էր եղել Հայերէն, Հայոց Պատմութիւն, Հայրենագիտութիւն եւ այլ առարկաներից: Դպրոցին կից կազմակերպուել էր 200 աշակերտներից բաղկացած Սկաուտական խումբ եւ ոտնագնդակի Արագ, Շանթ, Սիսուս խմբեր: Տկարակազմ մանուկների համար կազմակերպել էր յատուկ սննդի խոհանոց: Ստեղծել էր նաեւ որբանոց ու այրիանոց: Ուրախ բացականչութիւններով դիմաւորուեց Սիսուսի դպրոցի քայլերով ընթերցումը: Բանախօսի խնդրանքով, ի յարգանս Հ.Բ.Լ.Մ.ի, Սիսուսի դպրոցի աշակերտների ժառանգները ոտքի էին կանգնել: Ահա մի քառեակ այդ քայլերովից՝

Մայր Հայաստան, բուսաներդ Մեր բարերար հայ միութեան Հեռու քեզմէ, վտարանդի, Կուխտեն քեզի կեանք ու հոգի:

1919 թ. հայրենի գիւղեր վերադառնալուց յետոյ էլ Հ.Բ.Լ.Մ.ը շարունակել է սատար կանգնել Մուսա Լեւոնի տարբեր գիւղերում դպրոցաշինութեան գործին: Առ այդ, 1921-1925 թուականներին Մուսա Լեւոնի գիւղերում հիմնադրուել էին Սիսուս անունով մանկապարտէզ-նախարկթարաններ, շուրջ 525 աշակերտներով եւ 1925 եգիպտական ոսկիի օժանդակութեամբ: 1937-1938 թուականներին Հ.Բ.Լ.Մ.ը կազմակերպել էր թուով 14 մուսալեոցի աշակերտների ընդունելութիւնն ու ուսումնառութիւնը Կիպրոսի Մելքոնեան Կրթական հաստատութիւնում: Մուսա Լեւոնի ղեկավար, Լիբանան, հաստատուելուց յետոյ էլ Հ.Բ.Լ.Մ.ը շարունակել էր իր նպատար բերել նրանց տնտեսական ու մշակութային կեանքին:

Երախտիքի խօսք սանց նաեւ Տէր Նարեկ Ա. Քննչ. Շրիքեանը, Հ.Բ.Լ.Մ.ը համարելով հայ բարեգործական մեծագոյն միութիւններից մէկը, որը մի դար շարունակ անսակարկ օժանդակութիւն էր ցուցաբերել հայկական գաղթօժանդակների տնտեսական ու մշակութային ձեռնարկներին: Շնորհակալութիւն յայտնեց Միութեանը՝ Մուսա Լեւոնում, Եգիպտոսում, Այնճարում ցուցաբերած ընկերային ու մշակութային օժանդակութեան համար:

Հ.Բ.Լ.Մ.-ի հարաւային Քալիֆորնիայի մասնաճիւղի ատենապետ Պրն. Վահէ Իմաստուհեանը շնորհակալութիւն յայտնեց Մուսա Լեւոնի Միութեանը, այդ ձեռնարկը կազմակերպելու համար: Դրուատեց Մուսա Լեւոնիների քաջարի պայքարի ոգին, նրանց հերոսամարտը համարելով հայոց պատմութեան սիրալի դրուագներից մէկը: Ի երախտագիտութիւն Մուսա Լեւոնի հանդէպ կատարած բարեգործական բազմապիսի օժանդակութեան համար Պրն. Վահէ Իմաստուհեանին յանձնուեց Հ.Բ.Լ.Մ.-ի հարիւրամեակին նուիրուած յուշատախտակ:

Այս առթիւ, Պրն. Հրաչ Գատեան յուշատախտակ յանձնեց նաեւ Դոկտ. Վահրամ Շէմմասեանին՝ «Իր ժողովուրդին հանդէպ տածած սիրոյն եւ աշխատանքին համար» բովանդակութեամբ:

Տ. Նարեկ եւ Տ. Խորէն Աւագ քահանայ հայրերը օրհնեցին Մուսա Լեւոն Միութեան Տիկնանց Մարմնի կողմից պատրաստուած Մուսա Լեւոնի ուսեստները, հրաւիրելով ներկաները այն ճաշակելու:

Շատ գնահատելի ձեռնարկ էր կազմակերպուած: Ակնկալուած է որ Մուսա Լեւոն Միութիւնը յետագային նաեւ նման ձեռնարկներ իրակա-

«ՄԱՐԶԱՇԽԱՐԿԻ ԱՆՈՒԱՆԻ ԸԱՅԵՐԸ»

Շարունակում է 14-էն

1953 թ., առաջին խորհրդային բռնցքամարտիկը, որը նուաճեց Եւրոպայի ախոյեանի կոչումը՝ Վլադիմիր Ենգիպարեանն էր: Անցեալ տարի մարզական լրագրողների կողմից Եուրի Վարդանեանը ճանաչուեց բոլոր ժամանակների լաւագոյն ծանրորդը:

Ֆրանսայից, հայագրի աւտոարշաւորդ Ալեւն Պրոստը, որը չորս անգամ դարձել էր աշխարհի ախոյեան, մարզական լրագրողների կողմից ճանաչուել էր 20րդ դարի, տեխնիկական մարզաձեւերի լաւագոյն մարզիկ:

Յատկանշանակն է Հրաչեայ Շահազիգեանի ընտանիքի նուաճումը: Նրանք ամբողջ ընտանիքով (Հրաչեան 7 անգամ, նրա որդին՝ Արմանը երկու անգամ եւ դուստրը՝ Գայեանէն երեք անգամ) 12 անգամ դարձել են նաւամտելային սպորտի գծով աշխարհի ախոյեան եւ յաւակնուած են Կենիսի մրցանիշների գրքում գրանցուելու:

Ամբողջ աշխարհում յայտնի են շախմատի աշխարհի ախոյեաններ Տիգրան Պետրոսեանի եւ Գարի Գասպարովի, ինչպէս նաեւ Վլադիմիր Յակոբեանը, Ռաֆայէլ Վահանեանի, Լեւոն Արոնեանի եւ այլ հայ շախմատիստների անունները:

1998 թուականին Ֆրանսայի հաւաքականի կազմում աշխարհի ախոյեաններ դարձան ֆուլթպոլիստներ Եուրի ձորբաեֆը եւ Ալեւն Պօրոսեանը:

Հանրաճանաչ են բռնցքամարտիկներ Իսրայէլ Յակոբելիսեանի, Նշան Մուսչեանի, Խորէն Ինճէյեանի, Դաւիթ Թորոսեանի, Մեխակ Ղազարեանի, Սամսոն Խաչատրեանի, Կամօ Սարոյեանի, Ռոբերտ Քէշիշեանի, Ժագ Հայրապետեանի (վերջին երկուսը Ֆրանսայից), Վիգ Դարչինեանի, Արթիւր Աբրահամի, Վանէս Մարտիրոսեանի, ըմբիշներ Սարգիս Վարդանեանի, Արամ Եալթիրեանի, Գուրգէն Շատուրեանի, Արամայիս եւ Գէորգի Սալադովների, Եուրի Շահմուրատովի, Արա Գէորգեանի, Բենուհ Փաշայեանի, Ալֆրէտ Տէր-Մկրտչեանի, Արա Աբրահամեանի, Ստեփան Սարգիսեանի, թեթեւ աթլետներ Իգոր Տէր Յովհաննիսեանի, Ռոբերտ Էմմիլյանի երկուսն էլ (թուիչք երկարութիւն), մարմնամարզիկներ Արթիւր Յակոբեանի, Ալբերտ Ագնաւորեանի, Արմինէ Բարութեանի, ծանրորդներ Սուրէն Բաղդասարովի (եղել է նաեւ ԽՍՀՄ հաւաքականի գլխաւոր մարզիչը), Սերգէյ Առաքելովի, Վարդան Միլիտոսեանի, Եուրիկ Սարգեանի, Աշոտ Դանիէլեանի, հրաձիգներ Երջանիկ Աւետիսեանի, Զինարար Միմոնեանի, պասթեթպոլիստներ Արմենակ Ալաճաճեանի եւ Ստեփան Սպանդարեանի (ԽՍՀՄ-ի հաւաքականի մարզիկներից), ջրայցատկորդներ Դաւիթ Համբարձում-

եանի եւ Սիրվարդ Էմիրդեանի, թենիսիստ Դաւիթ Նալպանտեանի, ջրասուզորդ Շաւարշ Կարապետեանի եւ ուրիշների անունները:

Պէտք է նշել, որ հայ մարզիկները առաւել աչքի ընկնող յաջողութիւնների են հասել անհատական մարզաձեւերում, ի հարկէ չի կարելի մոռանալ Երեւանի «Արարատ»ի 1973 թուականի յաղթարշաւը եւ Հայաստանի շախմատիստների Թուրինի շախմատային ողիմպիադայի աննախընթաց յաջողութիւնը: Վերոնշեալ եւ այլ հայագրի մարզիկների, մարզիչների, մարզական գործիչների եւ այլ առաւել մանրամասն լրատուութեան հետ կարող էք ծանօթանալ ընթերցելով Լոս Անճելոսում լոյս տեսած «Մարզաշխարհի Անուանի Հայերը» գիրքը, որի հեղինակն է Լոս Անճելոսում լոյս տեսնող «Նոր Օր» շախմատիստների մարզական էջի պատասխանատու Աւետիս Բայրամեանը:

Իմիջիայլոց, գրքի հեղինակը 1971-77 թթ. եղել է Երեւանում լոյս տեսնող «Հայաստանի Ֆիզկուլտուրնիկ» մարզական թերթի ֆուլթպոլային վիճակագիրը:

Գրքի մօտ 530 էջերում տրուած է տեղեկատուութիւն աւելի քան 1700 անձի մասին, այն հարուստ է նկարներով (աւելի քան 1200 նկար), այնտեղ ընդգրկուած են տարբեր երկրների 50 նամականիշներ նուիրուած հայ մարզիկներուն: Գրքում մարզաձեւերը դասակարգուած են ըստ անհատական, թիմային եւ տեխնիկական մարզաձեւերի: Այն ունի նաեւ բաժիններ, նուիրուած մարզական գործիչներին, մամուլին, լրագրողներին եւ կազմակերպութիւններին:

Տրուած են մարզաձեւերի համառոտ նկարագրութիւնը: Քանի որ տուեալ աշխատութիւնը հանդիսանում է համահայկական ընդգրկումով առաջին փորձը յայտնի բովանդակութեամբ, բացթողումները, անճշտութիւններ, վրիպակներ: Որոշ մարզիկ էլ տեղեակ չէին այնպիսի գրքի լոյս ընծայման մասին:

Գրքի հեղինակը շնորհակալութեամբ կ'ընդունի բոլոր առաջարկութիւնները, դիտողութիւնները, ճշգրտումների եւ լրացումների գծով եւ այն հաշուի կ'առնի գրքի երկրորդ հրատարակութեան նախատեսուած է 2007 թուականին:

Բոլոր դիտողութիւնները, առաջարկները, ցանկութիւնները, ճշգրտումները եւ աւելացումները գրքի հեղինակին կարող էք յայտնել (818) 281-6549 cell եւ կամ (818) 243-8676 հեռախօսահամարով:

Գիրքը կարող էք ձեռք բերել Կլէնտէյլում գտնուող «Պերճ», «Ապրիլ», «Սարգարապատ» գրատուններից կամ անմիջական դիմելով հեղինակին:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ»
ԸՆՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՏԵՅԼ - ՊՈՐՊԵՆՔ - ԼԱ ԲՐԵՍԵՆՈ
ԳԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՈՒԹՊՈԼ

ՐԱՅԱՍԱՆ - ՓԱՆԱՍԱ 0-0

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը Լոս Անձելեսում ընկերական մրցախաղում ոչ-ոքի է խաղացել Փանամայի ընտրանիի հետ: Հաշիւը բացել է Փանամայի Լուիս Տեջատան, այնուհետեւ Արա Յակոբեանը իրացրել է 11մ հարուածը, որը նշանակուել էր նրան վայր գցելու համար: Խաղն ընթացել է բաւական կոպիտ պայքարում, որի արդիւնքում ՀՀ հաւաքականից դաշտից հեռացուել են Կարէն Ալեքսանեանը ու Սարգիս Յովսէփեանը, ինչպէս նաեւ Փանամայի ֆուտպոլիստներից մէկը:

ՆԻԳԻՏԱ ՄԻՍՈՆԵԱՆԸ ԱՐԺԱՆԱՅԵԼ Է ՈՒԵՖԱԻ ՊԱՐԳԵԻՆ

Նախկինում հանրայայտ խորհրդային ֆուտպոլիստ եւ մարզիչ, ներկայումս Ռուսաստանի ֆուտպոլային միութեան փոխնախագահ Նիգիտա Միմոնեանը, որի գլխաւորութեամբ Երեւանի «Արարատը» 1973թ. դարձաւ ԽՍՀՄ ախոյեան ու գաւաթակիր, արժանացել է ՈՒԵՖԱ-ի շքանշանին:

ՌԴ ֆուտպոլային միութեանն ուղղուած նամակում ՈՒԵՖԱ-ի գլխաւոր տնօրէն Լարս-Կրիստեր Օլսոնը մասնաւորապէս նշել է. «ՈՒԵՖԱ-ի նախագահ եւ գործկոմի անունից ուրախ ենք տեղեկացնել, որ Նիգիտա Միմոնեանը արժանացել է ՈՒԵՖԱ-ի շքանշանի՝ եւրոպական ֆուտպոլում ունեցած զգալի աւանդի համար»: Պարզեւտրման հանդիսաւոր արարողութիւնը տեղի կունենայ Յունուարի 25-ին Տուսելտորֆում կայանալիք ՈՒԵՖԱ-ի գոնկրէտում, որում անցկացուելու են նաեւ նախագահական ընտրութիւններ: Շքանշանը Նիգիտա Միմոնեանին կը յանձնէ ՈՒԵՖԱ-ի նախագահ Լենարտ Եուհանսոնը:

ՏԱՓՕՂԱԿՈՎ ՇՈՒՅԻ ԱՇԽԱՐԿԻ «Շ» ԽՄԲԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՆ ՐԱՅԱՍԱՆ - ԹՈՒՐԵՒԱ 4-2

Մինչեւ 20 տարեկանների տափօղակով հոգիչի Հայաստանի երիտասարդական հաւաքականը Թուրքիայի մայրաքաղաք Անգարայում աւարտուած «Շ» խմբի աշխարհի առաջնութեան երկրորդ փուլի մրցաշարին վեց թիմերի մէջ զբաղեցրել է 4-րդ տեղը՝ հինգ խաղում տանելով երկու յաղթանակ, պարտուելով երէքում եւ արդիւնքում՝ առաջ անցնելով Թուրքիայի ու Պուկարիայի թիմերից:

Հայաստանի հաւաքականը յաղթանակներ արձանագրուած է Թուրքիայի դէմ 4-2 արդիւնքով եւ Պուկարիայի դէմ 9-5 արդիւնքով:

Միւս խաղերում Հայաստան պարտուել է Նոր Ձեւանտիայից 5-6 արդիւնքով, Չինաստանից 4-7 արդիւնքով եւ Պեճիկիայից 4-7 արդիւնքով:

ՃԱՆԱՏ

ՖԻԴԵ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԼԵՒՆ ԱՐՈՆԵԱՆԸ 7-ՐԴՆ Է

Շախմատի միջազգային ֆետերացիան (ՖԻԴԵ) հրապարակել է 2007 թուականի Յունուարի դրութեամբ աշխարհի 100 լաւագոյն շախմատիստների վարկանիշային ցուցակը, որում 25-ամեայ հայ շախմատիստ, աշխարհի գաւաթակիր եւ օլիմպիական ախոյեան Լեւոն Արոնեանը 2744 միաւորով զբաղեցնում է 7-րդ տեղը: ՖԻԴԵ-ի մէկ այլ ցուցակում, որում 10 լաւագոյն շախմատիստների միջին վարկանիշի հիման վրայ դասակարգուած են երկրները, Հայաստանը 4-րդն է:

Լաւագոյն շախմատիստների ցուցակի առաջին երեք տեղերը զբաղեցնում են պուկարացի Վեսլին Թոփալովը՝ 2783, հնդիկ Վիշվանաթան Անանդը՝ 2779, եւ ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկը՝ 2766 միաւորով:

Ցուցակում 20-րդ տեղը զբաւում է Վլադիմիր Յակոբեանը, 47-րդը՝ Գաբրիէլ Սարգսեանը, 78-րդը՝ Կարէն Ասրեանը, 79-րդը՝ Սմբատ Լպուտեանը: Սերգէյ Մովսէսեանը Սլովակիայից 73-րդ տեղում է:

2006 թուականին Թուրինում անցկացուած շախմատի համաշխարհային օլիմպիատայում Հայաստանի տղամարդկանց հաւաքականը նուաճեց ախոյեանի կոչումը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՑՈՒԹՊՈԼ

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՆ

Անգլիոյ ֆուտպոլի առաջնութեան 23-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ուաթֆորտ - Լիվըրփուլ	0-3	Շեֆիլտ Եուն. - Փորթսմութ	1-1
Չելսի - Ուիկան Աթլ.	4-0	Չարլթըն - Միտլդլզպորո	1-3
Մանչեսթըր Եուն. - Ասթըն Վիլլա	3-1	Պլեյքլըն - Արսենալ	0-3
Պոլթըն - Մանչեսթըր Սիթի	0-0	Էվըրթըն - Ռիտինկ	1-1
Ուէսթ Յամ - Ֆուլհամ	3-3	Թոթեմհամ - Նիւքեմըլ	2-3

Առաջատար խումբերու դասաւորումը

Մանչեսթըր Եունայթըտ	23	18	3	2	52-16	57
Չելսի	23	15	6	2	41-17	51
Լիվըրփուլ	23	13	4	6	35-16	43
Արսենալ	23	12	6	5	44-19	42
Պոլթըն	23	12	4	7	27-21	40
Փորթսմութ	23	10	7	6	34-23	39
Էվըրթըն	23	8	8	7	29-23	32

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՆ

Իտալիայի ֆուտպոլի առաջնութեան 19-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Էմփոլի - Փարմա	2-0	Աթալանթա - Լիվորնո	5-2
Թորինո - Ինթեր Միլան	1-3	Փալերմո - Ուտինէզէ	2-0
Քիեւո - Քաթանիա	2-1	Մեսինա - Ա. Ես. Ռոմա	1-1
Սամտորիա - Ֆիորենթինա	0-0	Քալիարի - Ասքոլի	1-0
Ա. Սէ. Միլան - Ռեճինա	3-1	Լացիո - Սիենա	1-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Ինթեր Միլան	19	16	3	0	41-16	51
Ա. Ես. Ռոմա	19	13	3	3	41-16	42
Փալերմո	19	12	2	5	37-23	38
Ֆիորենթինա	19	10	4	5	30-17	34
Ա. Սէ. Միլան	19	8	7	4	25-17	31
Լացիո	19	8	5	6	30-18	29
Քաթանիա	18	7	5	6	26-33	26

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՆ

Ֆրանսայի ֆուտպոլի առաջնութեան 20-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Փարիզ Սէն ժերմէն - Վալանսիէ	1-2	Պորսո - Լորիան	1-1
Օքսէռ - Սոչո	1-0	Նանթ - Նիս	1-0
Լը Մանս - Թրուա	2-0	Թուլուզ - Լիոն	2-0
Սըտան - Նանսի	2-2	Սէնթ Էթիէն - Մոնպարս	0-1
Լանս - Լիլ	1-1	Բընէ - Մարսել	0-2

Առաջատար խումբերու դասաւորումը

Լիոն	20	16	2	2	39-13	50
Մարսել	19	10	3	6	27-18	33
Լանս	18	9	5	4	25-20	32
Լիլ	17	8	7	2	26-15	31
Սէնթ Էթիէն	20	9	4	7	31-24	31
Նանսի	20	8	6	6	19-17	30
Սոչո	19	8	6	5	21-20	30

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՆ

Սպանիայի ֆուտպոլի առաջնութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Վալենսիա - Լեվանթ	3-0	Սելթա Վիկո - Աթլէթ. Մատրիտ	1-3
Էսփանիոլ - Պարսելոնա	3-1	Օսասունա - Ռէալ Պաթիս	5-1
Կիմնասթիք - Կեթաֆէ	1-3	Ռասինկ - Ռէալ Սոսիէտ	1-0
Սելիլլա - Մայորքա	1-2	Աթլէթ. Պիլպասո - Վիլաբալ	0-1
Յուլիվա - Տեփ. Քորունա	1-1	Ռէալ Մատրիտ - Սարակոսա	1-0

Առաջատար խումբերու դասաւորումը

Սելիլլա	18	12	1	5	37-19	37
Պարսելոնա	17	10	5	2	36-16	35
Ռէալ Մատրիտ	18	11	2	5	27-16	35
Վալենսիա	18	10	3	5	27-15	33
Աթլէթ. Մատրիտ	18	9	5	4	24-13	32
Սարակոսա	18	9	3	6	30-20	30
Յուլիվա	18	9	2	7	28-25	29

«ԿԱՅԾ»

Երիտասարդական Նուազախումբը
Պէտք Ունի Հայերէն երգերու Ծանօթ
Երիտասարդ Երգիչ Կամ Երգչուհիի
Հետաքրքրուողները Կրնան Հեռաձայնել
Ռազմիկին՝ 818-590-2824

You can change your behavior and we will help you to do that

AA
HYPNOSIS CENTER



Artin Sagherian
Hypnotherapy
Tel: 818-434-8118
Call for an appointment or consultation

ՀԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ
Փորձառու Բժիշկ
ԱՐԹԻՆ ՍԱԴՐԵԱՆ
Վկայեալ Հիպնոսաբոյժ

* Պատանդներու վերաբերող վարուելակերպային փոփոխութիւն
* ADD-ADHD
* Անկողնային գիշերային թրջում (միզային)
* Եղունգների կրճում

Հասցէ. 1160 North Central Ave., # 210, Glendale
Հեռ. 818-434-8118
Միայն ժամադրութեամբ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայեան) Ֆերմանեանի մահուան եօթերորդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Յունուար, 2007-ին, Ս. Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուին ներկայ գտնուիլ:

Սգակիրներ՝
Տէր եւ Տիկ. Արա Ֆերմանեան
Վիզէն Գուլյումճեան:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ողբացեալ ՋՈՒԱՐԹ ԱՐԱ ՊԱԹԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը ներկայովս կու գայ իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի ամուսնոյն, զաւակներուն եւ համայն հարազատներուն ու բարեկամներուն, ի մասնաւորի Արապաթլեան, Այնթապլեան, Գարամանուկեան, Մկրեան եւ Եղսրզեան ընտանիքներուն:

Արդարեւ Տիկին Զուարթ եղած էր տիպար մայր մը, եկեղեցասէր ու ազգասէր նուիրեալ մը, անոր ազնիւ ու քաղցր յիշատակը անթարամ պիտի մնայ բոլոր զինք ճանչցողներու սրտերուն մէջ:

Թող Աստուած անոր հոգին արժանի ընէ Երկնային Արքայութեան:

ԿԻԼԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Հանգուցեալ ՃՈՐՃ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը յանուն բոլոր կիլիկեանցիներուն, ներկայովս կու գայ իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելու այրիին Տիկին Սիպիլ Աբրահամեանին, զաւակներուն եւ համայն հարազատներուն ու բարեկամներուն:

Արդարեւ Պրն. Ճորճ Աբրահամեան եղած էր Կիլիկեանի պատուաբեր շրջանաւարտներէն մին եւ միշտ նիւթապէս եւ բարոյապէս զօրավիզ կանգնած էր իր վարժարանին:

Աստուած հոգին լուսաւորէ եւ Երկնքի Արքայութեան արժանի ընէ:

Այս առիթով Կիլիկեան Կրթական Միութեան եղած են փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար վարչութիւնս կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնները:

- Պուշաքեան Ընտանիք \$200
- Տէր եւ Տիկ. Նուպար Յակոբեան \$100
- Տէր եւ Տիկ. Վարդան Եղսրզեան \$100
- Տէր եւ Տիկ. Բարսեղ Անանեան \$100
- Տիկին Արշօ Աբարտեան \$100
- Տիար Ռազմիկ Մանուկեան \$100
- Տիար Ժագ Նալճեան \$100
- Տէր եւ Տիկ. Նորայր Մէթչիքեան \$50
- Տէր եւ Տիկ. Կարպիս Յովսէփեան \$50
- Տէր եւ Տիկ. Ալան Զաւեան \$50
- Mr. & Mrs. R & Z Frank \$50
- Տիար Ժագ Տէր Աշոտեան \$50
- Տէր եւ Տիկ. Հրանդ Խաչատուրեան \$30
- Տիկին Էլմաստ Պարոնեան \$30

Յաւերժացնելու համար իր ամուսնոյն Տիար Ճորճ Աբրահամեանի յիշատակը, այրին Տիկին Սիպիլ Աբրահամեան (Միսիրեան) տասը հազար տոլարի նուիրատուութեամբ կրթական հիմնադրամ մը կը հաստատէ Կիլիկեան Կրթական Միութեան մօտ:

Վարչութիւնս բարձր կը գնահատէ Տիկին Սիպիլ Աբրահամեանի նախաձեռնութիւնը եւ մեծապէս շնորհակալութիւն յայտնելով կրկին կը ցաւակցի իր մեծ կորուստին համար:

ԿԻԼԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to
Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

Palm Springs

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիթնիթի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:



- Վարձման գներն են՝
- Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
- Long Weekend-ների համար՝ \$ 500
- Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
- Մէկ ամսուայ համար՝ \$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՎԱՐՉՈՒ ՄՐԱԸ

ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ԵՆՈԱԶԱՅՆԵԼ

(626) 797-7680 (626) 398-0506

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Փասատիմայի մէջ հաստատութիւն մը կարիք ունի աշխատաւորուհիներու cash register-ի վրայ:
Հեռաձայն՝ (626) 833-2331:

Job Opportunity

Park Ranger - City of Glendale (\$3,618 - \$4,732/mo)

Peace officer position; patrols parks and open space, conducts interpretive programs, search and rescue operations, and wildlife and resources management.

HS Grad. Must be min 20 yrs of age. XInt benefits.

To apply, visit www.ci.glendale.ca.us or call 818-548-2110.

Filing deadline: February 9, 2007

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.*



THE EDUCATIONAL INSTITUTION WITH 30 YEARS OF OUTSTANDING SERVICE TO OUR COMMUNITY
AGBU MANOOGIAN – DEMIRDJIAN SCHOOL

Accredited by WASC
2007-2008 ACADEMIC YEAR



You are invited to our
OPEN HOUSE
SATURDAY, JANUARY 20, 2007
REGISTRATION: 10:00 AM
PROGRAM AND CAMPUS TOUR: 10:30 AM

The school offers...

- A developmentally balanced and comprehensive preschool program for 3 and 4-year old children.
- A progressive and enriched curriculum in core and extended subjects in elementary school.
- A challenging college preparatory program, including Honors and Advanced Placement classes, in grades 6th through 12th.

Parents are invited to join us to learn about our academic programs and educational opportunities available to students, preschool through high school. You will have a chance to meet with school officials, tour the campus, pick up an application packet, and speak with admissions officers.

RSVP OR FOR MORE INFORMATION, PLEASE CONTACT (818) 883-2428 EXT. 102

AGBU MANOOGIAN-DEMIRDJIAN SCHOOL
6844 Oakdale Avenue, Canoga Park, CA 91306

**AGBU - AYA GLENDALE-PASADENA CHAPTER
YOUNG LADIES COMMITTEE**

Presents

*A Romantic
Valentine Evening*

Music by DJ Heartbeat

SATURDAY, FEBRUARY 10, 2007 – 8:00PM

JJ'S STEAK HOUSE

88 W. COLORADO BOULEVARD, PASADENA, CA 91105

Donation \$125 - Includes Admission, Drinks & Raffle

To purchase tickets or more information, please call the AGBU Alex Manoogian Center (626) 794-7942

AGBU CENTENNIAL SPONSORS

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

BANK of ORANGE COUNTY Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market

MEMBER FDIC A Division of Placer Sierra Bank

Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720